22.qxd 14/11/2026 17:30 Page 1

Գեղամա աշխարհ

Քաղաքական, հասարակական, մշակութային թերթ 12 նոյեմբերի 2026թ. թիվ 22 (650)

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆՆ ԱՅՑ Է ԿԱՏԱՐԵԼ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՎԵՐԱՆՈՐՈԳՎՈՂ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ՇԻՆՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ

Նոյեմբերի 2-ին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը մշտադիտարկում է իրականացրել Սեւան համայնքի Ծովագյուղի եւ Սեւան քաղաքի թիվ 3 մանկապարտեզներում, որոնք վերանորոգվում են ՀՀ կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմից, մարզպետի այցի առաջին կանգառը եղել է Ծովագյուղի մանկապարտեզում, որտեղ վերանորոգման աշխատանքներն արդեն ավարտական փուլում են:

Աշխատանքներն իրականացվում են Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի պատվիրատվությամբ: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 175 միլիոն 427 հազար 852 դրամ: Մանկապարտեզի բակային տարածքի բարեկարգումն էլ իրականացվում է համայնքի միջոցների հաշվին՝ 62 միլիոն 850 հազար ՀՀ դրամ արժեքով:



Մարզպետի այցի երկրորդ կանգառը եղել է Սեւան համայնքի թիվ 3 «Հեքիաթ» մանկապարտեզում, որտեղ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի պատվիրատվությամբ վերանորոգման աշխատանքները եւս ավարտական փուլում են:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 167 միլիոն 103 հազար 764 դրամ: Մանկապարտեզի բակային տարածքի բարեկարգումն էլ իրականացվում է համայնքի միջոցների հաշվին՝ 78 միլիոն 900 հազար դրամ արժեքով:

Մարզպետը զրուցել է շինարարների հետ, նկատված թերությունների վերացման ուղղությամբ արել դիտողություններ ու առաջարկություններ, տվել համապատասխան հանձնարարականներ:

Մարզպետ Կարեն Սարգսյանը նոյեմբերի ընթացքում մշտադիտարկում է իրականացրել նաեւ Սեւան, Ճամբարակ, Մարտունի եւ Վարդենիս համայնքների շինհրապարակներում:

ՄԱՐՏՈՒՆԻ, ԳԱՎԱՌ, ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ ՎԵՐԸՆՏՐՎԵԼ ԵՆ ԻՐԵՆՑ ՊԱՇՏՈՆՆԵՐՈՒՄ



2026 թվականի հոկտեմբերի 25-ին կայացած ՏԻՄ ընտրություններում Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանը, Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանը եւ Վարդենիս համայնքի ղեկավար Աիարոն Խաչատրյանը վերընտրվել են բացարձակ առավելությամբ:

ՀՀ ԿԸՀ պաշտոնական կայքի տվյալներով՝ Մարտունի համայնքում քվեարկությանը մասնակցել է 18 հազար 629 ընտրող , որոնցից 12 հազար 579-ը կամ 67,6 տոկոսը քվեարկել են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության օգտին, որի նախընտրական ցուցակը գլխավորում էր Մարտունի համայնքի գործող ղեկավար Հովհաննես Հովեյանը:

Գավառ համայնքում քվեարկությանը մասնակցել են 12 հազար 761 ընտրող, որոնցից 10 հազար 380-ը կամ 81,3 տոկոսը քվեարկել են «Համերաշխություն» դաշինքի օգտին, որի նախընտրական ցուցակը գլխավորում էր Գավառ համայնքի գործող ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանը:

Վարդենիս համայնքում քվեարկությանը մասնակցել են 10 հազար 161 ընտրող, որոնցից 9530-ը կամ 93,8 տոկոսը քվեարկել են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության օգտին, որի նախընտրական ցուցակը գլխավորում էր Վարդենիս համայնքի գործող ղեկավար Աիարոն Խաչատրյանը: Ի դեպ, Վարդենիս համայնքում, ի տարբերություն Գավառ ու Մարտունի համայնքների, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը մրցակիցներ չուներ, քանի որ որեւէ կուսակցություն կամ դաշինք քվեարկվելու համար չէր առաջադրվել:

Սեւան համայնքում ՏԻՄ ընտրությունները կկայանան 2026 թվականի նոյեմբերի 29-ին, Ճամբարակ համայնքում՝ 2027 թվականին:

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանն իր պաշտոնական էջում ՏԻՄ ընտրություններում վերընտրվելու կապակցությամբ շնորհավորել է Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանին, Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանին եւ Վարդենիս համայնքի ղեկավար Աիարոն Խաչատրյանին՝ մաղթելով նրանց նորանոր հաջողություններ համայնքի ղեկավարի բարդ ու պատասխանատու աշխատանքում,աշխատանքային անսպառ եռանդ:

Հետգրություն- «Գեղամա աշխարհ» թերթի խմբագրակազմը եւս միանում է բոլոր շնորհավորանքներին, մաղթում նորանոր ձեռքբերումներ, վերելքի ու զարգացման նոր թափ Գավառ, Մարտունի, Վարդենիս համայնքների բոլոր բնակավայրերում, հուսալով, որ համայնքների վերընտրված ղեկավարները տարիների իրենց փորձով ու հաջողություններով կկարողանան արձանագրել շատ ավելի տեսանելի առաջընթաց ու զարգացում, հայրենաշեն բազմաթիվ ծրագրերի իրականացում:

«Գեղամա աշխարհ»

ՎԱՐԴԱՁՈՐԻ ԹՈՒԼԻԽՈՒ ԿԻԿԼՈՊՅԱՆ ԱՄՐՈՑԸ

Վարդաձորի Թուլիխու ամրոցը տարածվում է Սեւանա լճի հարավային ափից մի քանի կիլոմետր հեռավորությամբ, Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վարդաձոր գյուղի հյուսիսարեւելյան ու Չորագյուղի հյուսիսային հատվածներում: Ժամանակին այն եղել է Սեւանա լճին շատ մոտիկ, գրեթե ափամերձ հատվածում, երբ լճի մակարդակը ծովի մակերեւույթից գտնվել է 1916 մետր բարձրության վրա:

Թուլիխու ամրոց ենք այցելում հնասեր, «Աժդահակ Տուր»-ի ղեկավար Թաթուլ Տոնոյանի հետ: Մեզ ուղեկցում են այժմ ԱՄՆ-ում բնակվող էդիկ Եզդօղլյանը, նրա որդի Տարոնը, գեղանկարիչ Սոֆյա Մուսոյանը, Գավառի պետական համալսարանի ուսանող Միլենա Դարբինյանը, ովքեր առաջին անգամ են լսում այս ամրոցի մասին ու պարզապես կլանված են իրենց առջեւ փռված քաղաք-ամրոցի ավերակների ամեն մի քարով, շարվածքներով, այլ հետաքրքրություններով:



Մեզ համար այս այցով բացվում է պատմության գաղտնախորհուրդ, աշխարհ, անկրկնելի դաս ու դասագիրք, որը պիտի դառնա ամեն մի հայ մարդու հոգեւոր սեփականությունը, սերունդների հիշողության մեջ վառ պահի ազգային արժեքներ կրող այս տարածքի տիեզերական հիշողությունը:

Թուլիխու անունը պատմագիտությանը հայտնի է Ուրարտուի արքա Սարդուր Երկրորդի՝ կիկլոպյան այս ամրոցի մոտ գտնվող քարի վրա թողած սեպագիր արձանագրությունից, որն արվել է Քրիստոսից առաջ մոտ 764-735 թվականների միջակայքում, որը համընկնում է նրա գահակալման տարիների հետ: Այդ արձանագրությունը, ինչպես վկայում է Հայ Առաքելական եկեղեցու նշանավոր գործիչ, պատմաբան Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը, Կովկասի փոխարքայի միջնորդությամբ 1862 թվականին տեղափոխվել է նախ Նոր Բայազետ, ապա՝ Թիֆլիս: Այդ արձանանագրության վերընթերցմամբ հաստատվում է, որ Տուլիխուն գրավվել է Վանի թագավորության բանակի կողմից:

/շարունակությունը՝ էջ 4-ում/

22.qxd 14/11/2026 17:30 Page 2

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ «ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ» ԾՐԱԳՐԵՐԸ ԳՏՆՎՈՒՄ ԵՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ



Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի 4 բնակավայրերում «Մասնակցային բյուջետավորման» գործընթացով իրականացվող ծրագրերը գտնվում են ավարտական փուլում

Դրանք իրականացվում են Գեղամավան, Ծաղկունք, Դդմաշեն եւ Վարսեր գյուղերում:

Գեղամավան բնակավայրում «Առողջ եւ ակտիվ երիտասարդություն» ծրագրի շինարարական աշխատանքներն ավարտվել են: Գույքի զգալի մասն արդեն գտնվում է բնակավայրի երիտասարդական կենտրոնում: Գույքի՝ բնակավայր տեղափոխման աշխատանքներն ավարտական փուլում են: «Առողջ եւ ակտիվ երիտասարդություն» ծրագրի աշխատանքների իրականացման ընդհանուր բյուջեն, համաձայն պայմանագրի, կազմում է 13 միլիոն 121 հազար դրամ, որից 10 միլիոն 124,6 հազար դրամը հատկացվել է ՀՀպետականբյուջեից, 2 միլիոն 996. 4 հազարդրամը՝համայնքայինբյուջեից:

«Երիտասարդության զբաղվածության կենտրոնի հիմնում Ծաղկունք բնակավայրում» ծրագրի շինաշխատանքներն ավարտական փուլում են: Ծրագրի բյուջեն, համաձայն պայմանագրի, 13 միլիոն 476 հազար դրամ է, որից 10 միլիոն 300 հազար դրամը հատկացվել է ՀՀ պետական բյուջեից, 3 միլիոն 176 հազար դրամը՝ համայնքային բյուջեից:

«Դդմաշեն բնակավայրում տրանսպորտային կանգառների տաղավարների եւ նստարանների տեղադրում» ծրագրով իրականացվող աշխատանքները գտնվում են ավարտական փուլում, բնակավայրի փողոցներում արդեն տեղադրվել են նստարաններ, թափոնամաններ, որին հաջորդելու է կանգառասրահների տեղադրումը:

Ծրագրի բյուջեն, համաձայն պայմանագրի, 12 միլիոն 34 հազար դրամ է, որից 9 միլիոն 189 հազարդրամը հատկացվել է ՀՀ պետական բյուջեից, 2 միլիոն 845 հազար դրամը՝ համայնքային բյուջեից:

Վարսեր բնակավայրում իրականացվող «Առողջ միջավայր» բազմաֆունկցիոնալ մարզադաշտ» ծրագրի շրջանակներում ընթացքի մեջ են մարզադաշտի կառուցման աշխատանքները:

Ծրագրի բյուջեն, համաձայն պայմանագրի, 13 միլիոն 38.7 հազար դրամ է, որից 10 միլիոն 200 հազար դրամը հատկացվել է ՀՀ պետական բյուջեից, 2 միլիոն 838.7 հազար դրամը՝ համայնքային բյուջեից:

Սեւան համայնքի ավագանու 2026 թվականի հոկտեմբերի 22-ի նիստում համապատասխան որոշմամբ հաստատվել է Սեւան համայնքում 2027 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացի մեկնարկը:

Արմինե Ղուկասյան

ԳԱԳԱՐԻՆ ԳՅՈՒՂԻ ԳԱԳԻ ՓՈՂՈՑԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԱՎԱՐՏՎԵԼ ԵՆ



Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի Գագարին բնակավայրի Գայի փողոցի հիմնանորոգման աշխատանքներն արդեն հատել են վերջնագիծը:

Աշխատանքներն իրականացվել են ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում:

Գագարինի Գայի փողոցի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 116 միլիոն 400 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Սեւանի համայնքապետարանը: Ծրագրով նախատեսված էր Գայի փողոցի ասֆալտապատում՝ 10980 քմ տարածքով, մայթերի սալիկապատում, եզրաքարերի եւ վաքերի տեղադրում, ջրահեռացման համակարգի կառուցում:

Շինարարական աշխատանքները մեկնարկել էին 2026 թվականի օգոստոսին ու ավարտի հասցվել հոկտեմբերի վերջին:

Արմինե Ղուկասյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ ԾՆՎԵԼ Է 122 ԵՐԵԽԱ

Գեղարքունիքի մարզի ծննդօգնություն իրականացնող բուժհաստատություններում 2026 թվականի հոկտերմբեր ամսին ծնվել է 122 երեխա՝ 73 տղա եւ 49 աղջիկ:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության եւ սոցիալական ապահովության վարչությունից, 59 երեխա ծնվել է Մարտունու ծննդատանը, 28 երեխա՝ Գավառի, 21 երեխա՝ Սեւանի, 12 երեխա՝ Վարդենիսի բժշկական կենտրոններում, 2 երեխա՝ Ճամբարակի առողջության կենտրոնում:

2025 թվականի հոկտեմբերին Գեղարքունիքի մարզի ծննդօգնություն իրականացնող բուժհիմնարկներում ծնվել է 169 երեխա՝ 94 տղա եւ 75 աղջիկ:

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է ՌԱՄՍԱՐԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՂԵԿԱՎԱՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ



Հայաստանում ընթացող ՄԱԿ-ի կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովի (CBD COP 17) շրջանակներում Գավառի պետական համալսարանը հյուրընկալել է Ռամսարի կոնվենցիայի գլխավոր քարտուղար, դոկտոր Մուսոնդա Մումբային եւ նրա ղեկավարած պատվիրակությանը: Ողջունելով հյուրերին՝ ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը կարեւորել է Ռամսարի կոնվենցիայի դերը միջազգային նշանակություն ունեցող խոնավ տարածքների եւ ջրային թռչունների պահպանության գործում: Կոնվենցիան ընդունվել է 1971 թվականի փետրվարի 2-ին, Իրանի Ռամսար քաղաքում եւ ուժի մեջ մտել 1975 թվականին: Հայաստանի Հանրապետությունը կոնվենցիային միացել է 1993 թվականի նոյեմբերի 6-ին:

Դոկտոր Մուսոնդա Մումբան հանդես է եկել հետաքրքիր դասախոսությամբ՝ անդրադառնալով Ռամսարի ցանկում ընդգրկված խոնավ տարածքներին, դրանց էական ազդեցությանը Երկիր մոլորակի ընդհանուր էկոլոգիական հավասարակշռության եւ անվտանգության պահպանման գործում:

ԳՊՀ բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի դեկան, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր Մարտին Ավագյանը ներկայացրել է Հայաստանի Ռամսարյան տարածքների՝ Սեւանա լճի, Արփի լճի, «Սեւան» եւ «Արփի լիճ» ազգային պարկերի, «Խոր Վիրապի ճահիճ» պետական արգելոցի էկոլոգիական բնութագիրը եւ բնապահպանական նշանակությունը: Բանախոսները պատասխանել են ԳՊՀ դասախոսների եւ ուսանողների հարցերին:

ԳՊՀ գիտական խորհրդի որոշմամբ Մուսանդա Մումբային շնորհվել է շնորհակալագիր՝ երկարամյա եւ արդյունավետ բնապահպանական գործունեության համար:

Գլխավոր քարտուղարի պատվիրակության կազմում էին Ռամսարի կոնվենցիայի ազգային համակարգող, կենսաբանական գիտությունների դոկտոր Կարեն Ճենտերճյանը եւ Շվեյցարիայի Գլանդ քաղաքում գործող կոնվենցիայի քարտուղարության ներկայացուցիչները: Մասնակցում էր նաեւ Վրաստանից ժամանած բնապահպան փորձագետ:

Հյուրերը ծանոթացել են Սեւանա լճից հանված ծառերի արմատներից պատրաստված քանդակների՝ «Նոր կյանք, նոր շունչ» խորագրով հավաքածուին, որի մի մասը ցուցադրված է COP 17-ի «կանաչ գոտում»: Յուրօրինակ աշխատանքների հեղինակը՝ Գեղարքունիքի մարզի գավառ համայնքի Նրատուս գյուղի բնակիչ վարպետ Երեմ Կոստանյանը, ստացել է շնորհակալագիր ԳՊՀ ռեկտորատի կողմից:

Հյուրերն այցելել են նաեւ ԳՊՀ պատմագիտական թանգարանում եւ գրառումներ կատարել պատվավոր հյուրերի մատյանում:

ԳՊՀ արտաքին կապերի եւ լրատվության բաժին

ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԾ ՄԱՍՐԻԿ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ ԲԱՑՎԵԼ Է ՆՈՐ ԽՈՒՄԲ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ գյուղի մանկապարտեզում բացվել է նոր խումբ:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, Վարդենիսի համայնքապետարանի նախաձեռնությամբ եւ մի շարք կազմակերպությունների ու անհատների աջակցությամբ Մեծ Մասրիկի մանկապարտեզում իրականացվել են կարեւոր բարեփոխումներ՝ ստեղծելով երեխաների կրթության, խնամքի եւ զարգացման համար առավել բարենպաստ ու ժամանակակից պայմաններ:

Մանկապարտեզում բացվել է նոր խումբ, իսկ մյուս խումբը տեղափոխվել բարեկարգված եւ սահմանված չափորոշիչներին համապատասխանող տարածք՝ապահովելով փոքրիկների առօրյայի առավել հարմարավետ կազմակերպումը:

Կազմակերպված միջոցառման ընթացքում Վարդենիս համայնքի ղեկավար Աիարոն Խաչատրյանն իր երախտագիտությունն է հայտնել ծրագրի իրականացմանն աջակցած գործընկերներին:

Համայնքի ղեկավարը, բարձր գնահատելով գործընկերների ներդրումն ու պատրաստակամությունը, շնորհակալագրեր է հանձնել նախաձեռնության իրականացմանն աջակցած կազմակերպություններին եւ բարերարներին՝ Երեւանի «Ռոթարի Ակումբին», Դեաննե Գեորգետտե Յոունգին, «Դումենակչես» բարեգործական հիմնադրամին, ԱՄՆ «Փարոս» հիմնադրամին, «Ֆոքսօն Չիլդրեն Նաու» բարեգործական կազմակերպությանը:



ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՎԱՐՏՎԵԼ Է ԱՆԱՍՆԱԿԵՐԻ ԵՎ ՀԱՅՑԱՀԱՏԻԿԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ

Գեղարքունիքի մարզի տնտեսություններում 2026 թվականի հոկտեմբերի 20-ի դրությամբ արդեն ավարտվել է անասնակերի ու հացահատիկի բերքահավաքը:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության վարչությունից, նախնական արդյունքներով այս տնտեսական տարում Գեղարքունիքի մարզի տնտեսություններում կուտակվել է 135 հազար 61 տոննա խոտ, 13 հազար 475 տոննա ծղոտ, ինչը լիովին բավարար է՝ անասնագլխաքանակի ձմեռացումն ապահովելու համար:

Այս տնտեսական տարում մարզի տնտեսություններում ստացվել է 72 հազար 449 տոննա հացահատիկի համախառն բերք, որից 47700 տոննան ցորենի, 24749 տոննան գարու բերքն է:

Աշնանացան ցորենի արտերի մեկ հեկտարի միջին բերքատվությունը կազմել է 32,6, գարնանացան գարու արտերի մեկ հեկտարի միջին բերքատվությունը՝ 27,2 ցենտներ:

22.qxd 14/11/2026 17:30 Page 3

ՃԱՄԲԱՐԱԿԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՄՈՏԵՆՈՒՄ ԵՆ ԱՎԱՐՏԻՆ



Գեղարքունիքի մարզի Ճամբարակ քաղաքի կենտրոնական Գարեգին Նժդեհի փողոցում ավարտին են մոտենում հիմնանորոգման աշխատանքները:

Ճամբարակի կենտրոնական փողոցի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 608 միլիոն 610 հազար դրամ, որի 55 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 45 տոկոսը՝ Ճամբարակի համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է ճանապարհի երթեւեկելի մասի հիմնանորոգում՝ 1400 գծամետր երկարությամբ եւ 11780 քմ մակերեսով, երկշերտ ասֆալտբետոնյա ծածկի տեղադրմամբ, մայթերի վերակառուցում, ջրահեռացման համակարգի տեղադրում, այլ աշխատանքներ:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի նոյեմբերից ու վերսկսվել 2026 թվականի ապրիլից: 2026 թվականի նոյեմբերի 10-ի դրությամբ արդեն աշխատանքները գտնվում են ավարտական փուլում: Առաջիկա օրերին կիրականացվեն նաեւ ճանապարհի գծանշման եւ կահավորման աշխատանքներ: Շինարարական աշխատանքներն իրականացրել է «Ճան Շին» ՍՊԸ-ն:

Սուբվենցիոն մեկ այլ ծրագրով Ճամբարակի կենտրոնական փողոցում կառուցվել է արտաքին լուսավորության ցանց՝ 182 միլիոն 271 հազար դրամ արժեքով, որի 70 տոկոսը հատկացրել է ՀՀ կառավարությունը, 30 տոկոսը՝ Ճամբարակի համայնքապետարանը:

Սուբվենցիոն մեկ այլ ծրագրով, 54 միլիոն դրամի ներդրմամբ, Ճամբարակի կենտրոնական փողոցում կառուցվել է 145 մետր երկարության հենապատ:

Իրականացված ծրագրերի արդյունքում Ճամբարակի Գարեգին Նժդեհի փողոցը դարձել է միանգամայն բարեկարգ, անվտանգ, լուսավոր, կահավորված ու գեղեցիկ:

Նոյեմբերի 3-ին Ճամբարակի կենտրոնական փողոցում իրականացված աշխատանքների մշտադիտարկում է իրականացրել Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը:

«Գեղամա աշխարհ»

ՍԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲԱԿԱՅԻՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄԸ ԿՈՒՆԵՆԱ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ 2027 ԹՎԱԿԱՆԻՆ

Գեղարքունիքի մարզի Սեւան քաղաքի բակային եւ հանրային տարածքների բարեկարգումը կունենա շարունակություն նաեւ 2027 թվականին:

Համայնքապետարանն ամիսներ առաջ հանդես էր եկել նախաձեռնությամբ, որի արդյունքում Սեւան քաղաքի մի շարք տարածքներում՝ Իտալիայի այգի, Պրահա-Վինոր այգի, Նալբանդյան փողոց թիվ 12, 24, 26 շենքերի բակային տարածք, Շինարարներ փողոց, 3, 5 շենքերի հյուսիսային հատված, Աբովյան փողոց, 5, 7, 9, 11, 13, 15 շենքերի բակային տարածք, արդեն մեկնարկել են բարեկարգման աշխատանքները:

Սեւան քաղաքում բարեկարգման եւ հիմնանորոգման աշխատանքները կատարվում են համայնքի բյուջեի ֆինանսական միջոցներով:

Պրահա-Վինոր այգում մեկնարկած բարեկարգման աշխատանքներն իրականացվում են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության եւ համայնքի համաֆինանսավորմամբ:

2026 թվականին մեկնարկած բակերի եւ այգիների բարեկարգման ծրագրերը լինելու են շարունակական:

Սեւան համայնքի կողմից պատվիրված բակային տարածքների բարեկարգման նախագծանախահաշվային փաստաթղթերն արդեն պատրաստ են, եւ 2027 թվականին արդեն իսկ բարեկարգվող բակային տարածքների եւ այգիների ցանկն ավելանալու է նոր հասցեներով:

Համաձայն արդեն իսկ առկա փաստաթղթերի՝ 2027 թվականին հիմնանորոգվելու են Սեւան քաղաքի Կարմիր բանակ փողոց 2 շենքի, Հ. Շիրազ փողոց 20 շենքի, 5-րդ միկրոթաղամասի, Գրիբոյեդով փողոց 1 շենքի եւ Սարգիս Սեւանեցի փողոցի 1 շենքի, Շինարարների փողոց 1 շենքի եւ Նալբանդյան փողոց 55, 57 շենքերի, Նաիրյան փողոց 171 շենքի, Գրիբոյեդով փողոց 22 շենքի, Նաիրյան 2-րդ փակուղու, էներգետիկների փողոց 1 եւ 3 շենքերի, Կարմիր Բանակի փողոց 35 շենքի, Նաիրյան փողոցի 150 շենքի, Գագարին բնակավայրի բակային տարածքները:

Ըստ անհրաժեշտության՝ ցանկը կվերանայվի, եւ ցանկում ներառված տարածքները կավելանան:

Առաջիկա ամիսներին եւ տարիներին սեւանցիները կստանան ժամանցի ու հանգստի ներկայանալի եւ բարեկարգ տարածքներ՝ կահավորված, հարմարավետ ու անվտանգ վիճակում:

Արմինե Ղուկասյան

ԳԱՎԱՌԻ ՀԱՅԱՌԱՏ ԹԱՂԱՄԱՍԻ ՀԱՏՎԱԾՈՒՄ ՄԱՔՐՎՈՒՄ Է ԳԱՎԱՌԱԳԵՏԻ ՀՈՒՆԸ



Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Հացառատ թաղամասում ընթացքի մեջ են գտնվում Գավառագետի հունի մաքրման աշխատանքները:

Աշխատանքներն իրականացվում են տեղական բյուջեի միջոցներով, շուրջ 8 միլիոն դրամի հատկացմամբ:

Գավառագետի հունը Հացառատ թաղամասի հատվածում նախատեսվում է մաքրել 1100 մետր երկարությամբ:

Մաքրվում են գետի հունը և հեղեղատարները: Աշխատանքներն իրականացնում է «ԹԻՎ 28 ՇՄՇ» ԲԲԸ-ն: Նոյեմբերի 4-ի դրությամբ աշխատանքներն արդեն գտնվում են ավարտական փուլում: Իրականացված աշխատանքների շնորհիվ գարնանային վարարումների ընթացքում թաղամասի տնտեսությունները զերծ կմնան հեղեղումների վտանգից:

Ալվարդ Մանուկյան

ԲԱՐԵԼԱՎՎԵԼ Է ՄԱՐՏՈՒՆՈՒ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ



Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի եւ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության համագործակցության արդյունքում 2026 թվականին Մարտունու մանկական արվեստի դպրոցի նյութատեխնիկական բազայի բարելավման, երեխաների համար ժամանակակից ու հարմարավետ կրթամշակութային միջավայրի ստեղծման նպատակով իրականացվել է շուրջ 21 միլիոն դրամի արժողության գույքի, հումքի, սարքավորումների ձեռքբերման ծրագիր:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության ներդրումը կազմել է 16 միլիոն 31 հազար դրամ, Մարտունու համայնքապետարանի ներդրումը՝ 5 միլիոն 87 հազար դրամ:

Ձեռք բերված գույքը նախատեսված է դպրոցի առօրյա գործունեության, ուսումնական պարապմունքների, ստեղծագործական աշխատանքների եւ կրթամշակութային միջոցառումների կազմակերպման համար: Ձեռք է բերվել գերմանական արտադրության բարձրորակ կավագործական վառարան, բրուտագործական հաստոց, խեցեգործության մեջ հումք հանդիսացող եվրոպական կավ, ներկեր, շրջանակներ, մոլբերտներ եւ զանազան կահույք:

Ներդրման շնորհիվ կբարելավվեն դպրոցի նյութատեխնիկական պայմանները, կբարձրանա ուսումնական գործընթացի արդյունավետությունը, ինչպես նաեւ կընդլայնվեն երեխաների կրթական եւ ստեղծագործական զարգացման հնարավորությունները:

«Ծրագրով կահավորել է արվեստի դպրոցի 13 դասարան եւ 3 վարչական աշխատասենյակ, ինչպես նաեւ՝ նորաստեղծ խեցեգործական արվեստանոցը: Մարտունի համայնքում չի եղել որեւէ խեցեգործական արվեստանոց, չնայած որ համայնքը ունեցել է խեցեգործության լավ ավանդույթներ եւ անհատ վարպետներ: Արվեստանոցի ստեղծմամբ կավելանան նոր աշխատատեղեր, իսկ երեխաների եւ ուսուցիչների ձեռագործ աշխատանքները կարող են ցուցադրվել եւ վաճառվել:

Ծրագրի իրականացումը կարեւոր քայլ է Մարտունի համայնքում արտադպրոցական կրթության պայմանների բարելավման, երեխաների ստեղծագործական ներուժի բացահայտման եւ որակյալ կրթամշակութային ծառայությունների հասանելիության ընդլայնման ուղղությամբ»,-ներկայացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից:

«Գեղամա աշխարհ»

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՄՅՆՔԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է COP17-Ի ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքը հյուրընկալել է Երեւանում անցկացվող COP17համաժողովի շուրջ վեցտասնյակ մասնակիցների, որոնք ժամանել են աշխարհի տարբեր երկրներից:

Արտասահմանցի հյուրերին ուղեկցել են ՀՀ Արտաքին գործերի եւ միջազգային առեւտրի նախարարության ներկայացուցիչները:

Այցը մեկնարկել է «Նորաշեն» արգելոցից, որին հաջորդել է շրջայցը Սեւանի բուսաբանական այգում:

Սեւանի Ս. Զաքարյանի անվան մշակույթի պալատի հարակից տարածքում տեղադրվել են տաղավարներ, որտեղ ցուցադրվել են արհեստի ու արվեստի նմուշները, Սեւան համայնքում արտադրվող մի շարք արտադրատեսակներ:

«Ծաղկունք շեֆ հաուս» ռեստորան-հյուրատունը տեղում պատրաստել է իր խոհարարական արտադրանքը:

Օրն անցել է հետաքրքիր միջոցառումներով եւ նախաձեռնություններով:

Հյուրերը շրջել են տաղավարներում, օգտվել հայկական հյուրասիրությունից, մասնակցել շուրջպարին եւ պարի վարպետաց դասին:

Սեւանի մշակույթի պալատի դահլիճում ցուցադրվել է «Սեւանի Հիշողությունը, ծկնորսական մշակույթ» վավերագրական ֆիլմը, որը «Սեւան» երիտասարդական ակումբ» ՀԿ-ի հեղինակությամբ է կյանքի կոչվել՝ աջակցությամբ ՀՀ ԿԳՄՍ նախարարության:

Ֆիլմի ցուցադրությանը մասնակցել են նաեւ ֆիլմի հերոսները՝ Գեղարքունիքի մարզի ծկնորսները, որոնք ֆիլմի վերջում սիրով պատասխանել են արտերկրից ժամանածների հարցերին:

Օրը շարունակվել է «ԳԱՄՄԱ» բենդի համերգային ծրագրով, որն ուղեկցվել է սեւանցիների եւ հյուրերի անկաշկանդ պարերով եւ շուրջպարով:

Սեւանում հյուրընկալվածներին սպասվում էր նաեւ թեյախմություն: Սեւանի ափից հավաքած քարերի վրա նկարազարդումներն էլ րոպեներ անց քարերը վերածեցին տարբեր պատկերազարդումներով եւ գուներանգներով նկարների, որոնք մշակույթի պալատի հարակից տարածքում գտան իրենց տեղը՝ COP17-ը խորհրդանշող թիթեռի տեսքով:

Այն, ինչ հնարավոր չէր արտահայտել բառերով, դառնում էր ժպիտ, գրկախառնություն, լուսանկար:

«Սեւանե երիտասարդական ակումբ» ՀԿ-ի եւ Սեւանի համայնքապետարանի համագործակցությամբ կազմակերպված ընդունելությունը ներկաներին պարգեւեցին հաճելի պահեր, չմոռացվող ակնթարթներ:


Հյուրերի վերջին կանգառը Սեւանա լճի ափին էր, որտեղ էլ ամբողջացան օրվա տպավորություններն ու կուտակած զգացողությունները:

Արմինե Ղուկասյան



22.qxd 14/11/2026 17:30 Page 4

ՎԱՐԴԱՁՈՐԻ ԹՈՒԼԻԽՈՒ ԿԻԿԼՈՊՅԱՆ ԱՄՐՈՑԸ



/սկիզբը՝ էջ 1-ում/

«Այս Ադամխան/ այժմ Վարդաձոր/ գյուղի հանդի ներքեւև, ծովափանց մոտ ձորաբերանին մի քարի վերա գտինք 7 տող բեւեռաձեւ արձանագիր, որո օրինակն 1863 թվին հրատարակվեց Մոսկվայի «Համբավաբեր Ռուսիո» հայերեն շաբաթաթերթի մեջ: Այս բեւեռաքարը Արծրունի Բարսեղ աղան բերել տվեց Նոր-Պայազիտ 1865 թվին, եւ 1866 թվին փոխադրել են Տփխիսու Հնագիտական թանգարանը հրամանավ փոխարքա Մեծ Իշխան Միխայել Նիկոլաեւիչի...

Ադամխանի արձանագրի թարգմանությունը դնեմ այստեղ, որո իմաստն է. «Սարդուրի, Իբիտի որդին, ասե. «Շնորհիվ Խալդիացվոց ողորմած Աստուծույն՝ ես ավար առի Տուլիուհի արքայական քաղաքը, եւ գերեցի Սինալիբինին, Սիեր թագավորի որդվույն: Դուրս բերեցի Ուդուրիեդինի երկրից Սինալիբին թագավորի մարդկանց եւ կանանց»,-գրում է Մեսրոպ Սմբատյանցը:

Հայտնի հնագետ Աշխարհբեկ Քալանթարի ընթերցմամբ՝ Սարդուր Երկրորդը սույն արձանագրության մեջ հայտնել է շատ ավելի դաժան իրողություն՝ Սինալիբի կամ Ծինալիբի արքային կին դարձնելու մասին: Այս տեղեկությունը կարելի է երկու իմաստով մեկնաբանել՝ մեկ իմաստով կարելի է հասկանալ տղամարդուն բռնաբարության միջոցով ստորացնելու, մյուս իմաստով՝ պարզապես ամորձատելու մասին:

Դժվար է ասել, թե որտեղ է հիմա պահպանվում այս սեպագիրը, ինչ չափսեր ու կշիռ է ունեցել արձանագիր քարը՝ մեր պատմության հնագույն գրավոր վկայարաններից մեկը, սակայն փաստ է, որ այն վաղուց հայտնի է գիտական միջազգային լայն շրջանակներին դեռեւս 19-րդ դարի վերջերից:

Այս մի քանի տող արձանագրությունը վկայում է, որ մինչ Վանի թագավորության կողմից նվաճվելը Սեւանա լճի հարավային ափի այս հատվածը, որը փռված է Գեղամա լեռնավահանի հյուսիսարեւելյան ստորոտում, Սպիտակասարի վեհ ու բարձր հայացքի ներքո, ոչ միայն եղել է մարդաշատ, խիտ բնակեցված, այլ նաեւ ունեցել է պետականություն՝ հիմնված քաղաքակրթական որոշակի արժեքների ու թագավորական իշխանության վրա:

Հետաքրքիր է, որ Սեւանի ավազանում հայտնաբերված ու վերծանված ուրարտական 5 արձանագրություններից միայն այս մեկում են հիշատակված գրավված երկրամասի թագավորի անունն ու հայրանունը՝ Սինալիբը եղել է Սիեր թագավորի որդին:

Դժվար չէ պատկերացնել, որ մինչուրարտական նվաճումները Թուլիխուն եղել է մի առանձին իշխանության թագավորանիստ քաղաք, որի ենթակայությամբ եղել են այլ մանր իշխանություններ: Դժվար չէ նաեւ կռահել, թե ինչու է Սարդուր Երկրորդը հիշատակել իր գործադրած դաժանությունը՝ պարծենալով իր գործադրած սեռական բռնության, ծաղկուն երկիրը հրի ու սրի մատնելու, բնակչությանը գերեվարելու եւ տեղահանելու, ողջ հարստությունը թալանելու համար: Հավանաբար, Ուդուրի երկիրը շատ երկար է դիմադրել զավթիչներին՝ նրան պատճառելով նյութական ու մարդկային զգալի կորուստներ:

Հետաքրքիր կլիներ հստակեցնել, թե ո՞ր կողմից է հարձակման ենթարկվել ու ընկճվել անառիկ թվացող Տուլիխուն՝ արեւելքի՞ց, հարավի՞ց, թե՞ արեւմուտքից: Ամբողջ հարցն այն է, որ Տուլիխուն երեք կողմից պատված է եղել անառիկ, ամուր ու հզոր բերդ-ամրոցների լայն ցանցով, իսկ հյուսիսից՝ Սեւանա լճի ջրերով: Այնպես որ, մինչ Թուլիխու հասնելը Վանի թագավորության բանակը պետք է կարողանար իր ճանապարհին հաղթահարել մի քանի տասնյակ ամրոցների, նրանցում պատսպարված ռազմական ուժերի արգելքները:

Չի բացառվում, որ Սարդուր Երկրորդն իր արշավանքը ձեռնարկած լինի Սեւանա լճի արեւմտյան ու հյուսիսային ափերով՝ դուրս գալով դեպի արեւելյան ու հարավային ափեր ու այնտեղից մոտենալով Տուլիխուին: Չպետք է մոռանալ, որ Սարդուր Երկրորդը մեկ այլ սեպագիր արձանագրություն թողել է Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Ծովակ գյուղի կիկլոպյան ամրոցի հյուսիսակողմում գտնվող ժայռի վրա: Այս առումով էլ դժվար է ասել՝ Վանի բանակն առաջինը Տուլիխու՞ն է գրավել, ու շարժվել դեպի արեւելք, թե՞ Ծովակի կիկլոպյան ամրոցը գրավելուց հետո է շարժվել դեպի Տուլիխու: Ամենայն հավանականությամբ, Սարդուր Երկրորդը արեւմտյան կողմից չի հարձակվել Տուլիխուի վրա, քանի որ այդ կողմում Վելիքուխի երկիրն էր՝ ներկայիս Գավառ համայնքի տարածքը, որի նվաճման մասին իր սեպագիր արձանագրության մեջ արդեն հիշատակում է Վանի արքա Ռուսա Առաջին Սարդուրորդին: Վելիքուխի երկրի գրավումը, ըստ պատմական տեղեկությունների, եղել է Քրիստոսից առաջ 735 թվականին: Ռուսա Առաջինը մեկ այլ արձանագրություն էլ թողել է Գեղարքունիքի մարզի Ծովինար եւ Արծվանիստ գյուղերի սահմանաբաժանում, ժայռի վրա՝ ազդարարելով նոր թագավորությունների կամ իշխանությունների գրավման ու Թեյշեբա քաղաքի, բերդ-ամրոցի կառուցման մասին:

Ու կրկին հարց է առաջանում՝ Ռուսան Վելիքուխին գրավել է արեւմուտքի՞ց, թե՞ արեւելքից: Արդյո՞ք նա առաջին արձանագրությունը թողել է Ծովինարում, ուր ազդարարել է Թեյշեբա քաղաքի կառուցման մասին, թե՞ Գավառում, որտեղ ազդարարել է Խալդի քաղաքի կառուցման մասին:

Ամեն դեպքում, Վանի արքաները, սկսած Արգիշտի Առաջինից ու վերջացրած Ռուսա Առաջինով, կարողացել են մի քանի տասնամյակում նվաճել Սեւանա լճի ավազանը՝ այն արդեն միավորելով մեկ ընդհանուր պետության կազմում:

Չենք բացառում նաեւ Վանի թագավորության բանակների ներխուժումը Գեղարքունիքի մարզի հարավային կամ հարավարեւմտյան կողմից, որտեղից ճանապարհները լեռնային դժվարամատչելի տեղերով բերում են ինչպես Արարատյան դաշտից, այնպես էլ՝ Սյունյաց աշխարհից:

Թուլիխու ամրոցը հետազոտվել եւ ուսումնասիրվել է անվանի հնագետ Գեղեոն Միքայելյանի կողմից: Նրա մոտ այս ամրոցը նշված է «Քռա» տարբերակով, թեեւ նույն տեքստում հիշատակված է նաեւ Տուլիխու անվանումը: «Ադամխան գյուղից երկու կիլոմետր դեպի արեւելք կա ոչ բարձր, հյուսիս արեւելքից դեպի հարավ-արեւմուտք ձգվող մի բարձունք, որին տեղացիները Քռա անունն են տվել քարքարոտ լինելու պատճառով: Մինչ ուրարտական նվաճումները այդ ամրոցը հավանորեն Տուլիխու է կոչվել: Ամրոցը գտնվում է բարձունքի գագաթին, բոլոր կողմերից շրջապատված է չորս մետր լայնության պարսպով: Երեւում են երկրորդ պարսպի հետքերը, որոնք ավելի թույլ են, անցնում են ամրոցի արեւելյան մուտքից կիսաշրջանաձեւ դեպի հյուսիս, ապա, թեքվելով հյուսիս-արեւմուտք ու արեւմուտք, վերջանում են համարյա նույն կետում, որտեղից սկսվում են:

Իրեն շրջապատող բնակատեղիով այն գրավում է ավելի քան 6 հեկտար տարածություն, որից ավելի քան 1 հեկտարը զբաղեցնում է ամրոցը: Այն ունի 8 աշտարակ, բոլորը գրեթե հավասար մեծության: Դրանցից 4-ը գտնվում են արեւելյան եւ հարավարեւմտյան մուտքերի աջ ու ձախ կողմերում, երկուսը՝ արեւմտյան պարսպի, իսկ մյուս երկուսը՝ հյուսիսային պարսպամասերի վրա:

Մի խոշոր քառանկյունաձեւ աշտարակի հիմք 13x10,7 մետր չափսերով, գտնվում է երկրորդ պարսպի վրա, բարձրությունը պահպանվել է 3,7 մետրի սահմաններում: Հավանաբար, սա մի առանձին դիտակետ է եղել:

Ինչպես ամրոցի ներսում, նույնպես եւ նրանից դուրս երեւում են բոլորաձեւ ու քառանկյունի բնակարանների հետքեր:

Ուրարտացիները, գրավելով այս ամրոցը, ըստ երեւույթին, վերաշինություններ են կատարել այնտեղ եւ օգտագործել իրենց նպատակներին: Դա նկատվում է ամրոցի հարավարեւմտյան եւ հյուսիսարեւելյան պարիսպների կառուցման տեխնիկայից, որոնք ավելի կանոնավոր են շարված, ունեն ուղիղ գիծ: Ամրոցը եւ բնակավայրը հարուստ են վերերկրյա զանազան հնագույն մշակույթի մնացորդներով, սակայն նրանք այնքան մանրացած են, որ դժվար է նրանց միջոցով որեւէ բան ասել ամրոցի անցյալի վերաբերյալ:

Քռա ամրոցից ոչ հեռու, դեպի Ադամխան գյուղը, կա նույնպես մի բոլորաձեւ, ոչ շատ բարձր բլուր, որի վրա կան կիկլոպյան տիպի շինարարության մնացորդներ: Գյուղացիներն այդ վայրին Ներքին Դեմեր անունն են տալիս: Չնայած որ այստեղ պարիսպների հետքեր չեն երեւում, սակայն այս բնակավայրը հիշեցնում է Սեւանի ավազանի մյուս բնակավայրերի ամրոց-շեներին, որոնց ծայրամասային կացարաններ արտաքին պատերի միացումից բնակատեղը պարսպապատվել է: Այստեղ նույնպես ամրոց-շենի եզրային բնակարանների արտաքին պատի միացումն ուրույն կերպով պարսպապատել է բնակատեղին: Ամրոց-շենի ամենաբարձր մասում նկատելի են մի բոլորաձեւ, 25 մետր տրամագծով կառույցի հետքեր: Այս ամրոց-շենը, անշուշտ, սերտորեն կապված է եղել Քռայի ամրոցի հետ: Բնակատեղիի ու ամրոցի միջանկյալ տարածության վրա նկատելի են բոլորաձեւ դամբարաններ»,-գրում է Գեղեոն Միքայելյանը:

Քռայի կամ Տուլիխու ամրոցը մեկ այլ անվանում էլ ունի, որը մեզ ներկայացրեց ու մեկնաբանեց Չորագյուղի բնակի, Հայ Առաքելական եկեղեցու ատենապետ, ազգագրագետ Սարո Ղազարյանը.



-Այս տարածքը մեր հայրերն ու պապերն անվանում էին «Գրեր», ի նկատի ունենալով հենց սեպագիր արձանագրություն կրող այն քարը, որը հազարամյակներ շարունակ եղել է այստեղ ու միայն նախորդ դարի 60-ական թվականներին է տեղափոխվել այլ պետության մայրաքաղաք:Մշակութային այս կողոպուտը փարատվում է միայն «Գրեր» անվանումով, որը պահում է հիշողությունը Տուլիխուում մի ժամանակ պահպանված արքայական արձանագրության նկատմամբ,-հավաստեց Սարո Ղազարյանը:

Քռայի ամրոցում 2000-ական թվականներին հնագիտական ուսումնասիրություններ է կատարել Հայ-իտալական միացյալ հնագիտական արշավախումբը՝ հայտնի հնագետ-ուրարտագետներ Սիմոն Հմայակյանի ու Ռաֆայելե Բիշիոնեի գլխավորությամբ: Տողերիս հեղինակին տված հարցազրույցներից մեկում Ռաֆայելե Բիշիոնեն փաստեց, որ Սեւանա լճի շրջակա ափերով մեկ խճուղի է ձգվել, որ այստեղ ձեւավորված ցեղային միությունները միավորված են եղել մեկ ընդհանուր պետության մեջ, որի կենտրոնը, իր կարծիքով, եղել է հենց Տուլիխուն:

Մեզ շատ ավելի հետաքրքիր, ընդգրկուն, արժեքավոր տեղեկություններ ու եզրահանգումներ փոխանցեց Հայ-իտալական արշավախմբի մյուս համաղեկավար Սիմոն Հմայակյանը, որը որոշակի լույս է սփռում Տուլիխու ասված խորհրդավոր քաղաքի, նրա առեղծվածային պատմության վրա: Սիմոն Հմայակյանի կարծիքով՝ այն եղել է քաղաք-պետություն՝ իր կազմում ունենալով նաեւ շրջակայքի մի քանի հզոր բերդաքաղաքները:

«Թուլիխուն տեղադրվում է Սեւանա լճի հարավ արեւմտյան ափեզերքին հարող տարածքում, Ծակքար եւ Չորագյուղ գետակների ավազանում: Վանի արքաների ու նրանց «քարտուղարների» կողմից այն ընկալվել է որպես մի բաղադրիչը էթիունե անվանված համադաշնության:

/շարունակությունը՝ էջ 5-ում/

22.qxd 14/11/2026 17:30 Page 5

ԳԱՎԱՌՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ «ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ ՆՈՐ ԲԱՅԱԶԵՏՈՒՄ» ԽՈՐԱԳՐՈՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Գեղարքունիքի Երկրագիտական թանգարանի աշխատակազմի նախաձեռնությամբ Գավառի Լեւոն Քալանթարի անվան դրամատիկական թատրոնի դահլիճում տեղի է ունեցել «Հարսանեկան ավանդույթը Նոր Բայազետում» խորագրով միջոցառում, որը ներկայացվել է թանգարանի աշխատակիցների եւ թատրոնի դերասանների համատեղ ուժերով: Միջոցառմանը ներկա են եղել ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Ջանիկ Բազեյանը, Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի, տարածաշրջանի կրթամշակութային հաստատությունների, արվեստի ոլորտի ներկայացուցիչներ, հյուրեր:



Միջոցառման ընթացքում ներկայացվել է ավանդական հարսանիքի ողջ բովանդակությունը՝ իր գեղեցիկ ծեսերով եւ Նոր Բայազետին բնորոշ սովորույթներով ու ավանդույթներով:

Այն ուղեկցվել է կենդանի երաժշտության, ուրախ երգ ու պարի մթնոլորտում, բեմական



փոքրիկ դրվագների ներկայացմամբ:

Գեղարվեստական կատարումներով հանդես են եկել Գավառի մշակութային հաստատությունների պարային խմբեր եւ անհատ կատարողներ:

-Նախաձեռնության նպատակն էր՝ պահպանել, արժեւորել եւ սերունդներին փոխանցել հայկական ազգային ավանդույթները եւ Գավառի տարածաշրջանին բնորոշ մշակութային առանձնահատկությունները: Կարծում ենք, որ միջոցառումը ծառայեց իր բուն նպատակին, իսկ հանդիսատեսները մեզ հրաժեշտ տվեցին հաճելի տպավորություններով,-ներկայացրեցԳեղարքունիքի երկրագիտական թանգարանի տնօրեն Մարիաննա Մուսոյանը:

«Գեղամա աշխարհ»

ՎԱՐԴԱԶՈՐ ԳՅՈՒՂՈՒՄ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է 2 ՓՈՂՈՑ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վարդաձոր գյուղում ՀՀ կառավարության կողմից 2026 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ընթանում են 35-րդ փողոցի եւ Ալաշկերտ փողոցի 11-րդ նրբանցքի հիմնանորոգման աշխատանքները:



Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Վարդաձորի փողոցների հիմնանորոգման ծրագրային արժեքը կազմում է 42 միլիոն 864 հազար դրամ, որի 45 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 55 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է Վարդաձորի 35-րդ փողոցի եւ Ալաշկերտ փողոցի 11-րդ նրբանցքի ասֆալտապատում՝ 2760 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով, ջրահեռացման առուների կառուցմամբ:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2026 թվականի հոկտեմբերի սկզբից եւ նույն ամսի 20-ի դրությամբ իրականացվել շուրջ 90 տոկոսով:

Շինարարությունը նախատեսվում է ավարտի հասցնել այս տարվա ընթացքում:

Շինարարական աշխատանքներն իրականացնում է «ՎՄՎ ՔԱՄՓՆԻ» ՍՊԸ-ն:

ԼԻՃՔՈՒՄ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է 2 ՓՈՂՈՑ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լիճք գյուղում ՀՀ կառավարության կողմից 2026 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ընթանում են Ա-3 թաղամասի 7 եւ 8-րդ փողոցների հիմնանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Լիճքի փողոցների հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 145 միլիոն 338 հազար դրամ, որի 45 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 55 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է Լիճքի Ա-3 թաղամասի 7 եւ 8-րդ փողոցների ասֆալտապատում՝ 10342 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով, ջրահեռացման առուների կառուցմամբ:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2026 թվականի հոկտեմբերի սկզբից եւ նոյեմբերի 10-ի դրությամբ իրականացվել շուրջ70 տոկոսով:

Շինարարությունը նախատեսվում է ավարտի հասցնել այս տարվա ընթացքում:

Շինարարական աշխատանքներն իրականացնում է «ՎՄՎ ՔԱՄՓՆԻ» ՍՊԸ-ն:

Խոսրով Խլղաթյան

ՎԱՐԴԱԶՈՐԻ ԹՈՒԼԻԽՈՒ ԿԻԿԼՈՊՅԱՆ ԱՄՐՈՑԸ

/սկիզբը՝ էջ 4-ում/

Վանի Սուրբ Պողոս եկեղեցում հայտնաբերված Սարդուրե II-ի (764-735 թթ.) արձանագրությունում Թուլիխուն հիշատակված է յուրահատուկ «Թուլիխու /քաղաքի/ երկիր» ձեւով: Հանգամանք, որը հիմք է տվել Ն. Վ. Հարությունյանին, այսպիսի կազմություն ունեցող անուններով այլ իշխանությունների թվում, Թուլիխուին էլ բնութագրել, որպես «քաղաք պետություն»:

Վանի արքաների արձանագրություններում քաղաքի անվամբ նշանակվող իշխանությունների թիվը մեծ չէ. բոլոր հիշատակված «ցեղապետությունների» եւ «երկրների» շուրջ 25 տոկոսը տեղադրվում է հենց Սեւանա լճի ավազանում: Չնայած նման բնութագրին, Ք. Ա. 8-րդ դարում Թուլիխուն ուներ տիրակալ՝ Օհնալիբին, որի անունը հիշատակված է Քռայի արձանագրություններում: Ինչպես ցույց են տվել հայ - իտալական արշավախմբի երկարամյա տեղագիտական ուսումնասիրությունները Սեւանա լճի հարավային եւ արեւմտյան ավազանում, տարածքի կազմակերպման առումով Թուլիխուն չի տարբերվել հարակից ցեղապետություններից ու «երկրներից»: Թուլիխու իշխանությունը կազմված է եղել հինգ ամրոցներից (այժմ հայտնի են Քռա, Սանգար, Ներքին դեմեր, Բերդի դոշ, Նեղ բողազ անուններով), մեկ ամրացված դիտակետից (խոնարհված սուրբ) եւ նրանց միջեւ ու շրջակայքում տեղադրված չպաշտպանված բնակավայրերից:

Եթե փնտրելու լինենք առանձնահատկություններ, որոնք կհուշեին, թե ինչու՞ է Թուլիխուն, ի տարբերություն, հարակից երկրների, բնութագրվել յուրատեսակ «քաղաքի երկիր» անունով, կգտնենք երեքը.

1. Հովհաննես Կարագյոզյանի կարծիքով՝ Թուլիխուի բնակչությունը էթնիկական (հյուսիսկովկասյան) անկլավ էր հնդեւրոպական միջավայրում, այս եզրակացությանն է նա հանգում՝ ստուգաբանելով Թուլիխու անունը – իխու «գետ» համապատասխան բառով:

2. Եթե առաջնորդվենք Քռայի արձանագրության ընթերցման ու թարգմանության Ն. Վ. Հարությունյանի առաջարկած տարբերակով, ապա կունենաք յուրահատուկ մի տարբերակ, արքայի իշխանությունը նշելու համար.բիաական արձանագրություններում, սովորաբար շեշտվում է երկիրը, որի տիրակալն է տվյալ իշխանը. այստեղ, Օհնալիբին անվանված է, սակայն, «ժողովրդի արքա»:

3. Հովհաննես Կարագյոզյանը գտնում է, որ Թուլիխու անունը հայերենում կարող էր հնչել Թուղխ ձեւով եւ մատնանշել է նույնանուն գյուղի եւ գետի գոյությունը (մինչեւ 1915թ.) Վանա լճի հարավ-արեւմտյան անկյունում: 1970 թվականին Թուղխում իտալական արշավախումբը հայտնաբերել եւ ուսումնասիրել է վաղ միջնադարյան հայկական բազիլիկ եկեղեցի:

Գիտենք, որ Սարդուրեն Սեւանա լճի արեւմտյան ավազանից, հիմնականում՝ Վելիքուխեից մեծաթիվ բնակչություն է տեղափոխել Բիայնելե: Եթե ընդունենք, որ Վանի արքաները տեղահանվածներին, թեկուզ եւ զուտ շահադիտական նպատակներից դրդված, պետք է ձգտեին վերաբնակեցնել վայրերում, որոնք ունեն նրանց հայրենի երկրին նման աշխարհագրական միջավայր, ապա Թուլիխուի բնակիչները, վերաբնակեցման դեպքում, կարող էին հայտնվել Վանա լճի ափերին եւ թերեւս հենց այդպես էլ վարվել են թուլիխուցիների հետ:

Այս դեպքում պետք է ենթադրել, որ Սեւանա լճի ավազանում արդեն, թուլիխուցիներն ունեցել են կառավարման կայուն մի ձեւ, որը նրանց շարունակել է միավորել շաբաթներ տեւած գաղթի ճանապարհին եւ նոր բնակավայրում: Ուշագրավ է նաեւ այն, որ Սարդուրեն նրանց բնակեցրել է խորքային Բիայնելեում (տեղահանվածներին հազվադեպ, բացառիկ դեպքերում եւ միայն հատուկ նպատակով էին տեղափոխում այսքան հեռու), համատեղ բնակվելու հնարավորություն են տվել եւ որ առանձնապես բացառիկ է հարկադիր տեղահանման ու վերաբնակեցման ժամանակ, հնարավորություն են տվել նոր բնակության վայրի աշխարհագրական միջավայրը վերանվանել հին բնակավայրերից բերված տեղանուններով:

Այսպիսով, հայտնվելով Թուլիխուում, բիացիք հանդիպել են յուրատեսակ իրադրության, որը հիմք է տվել նրանց «երկիրը» եւ մանավանդ արքայի իշխանությունը բնութագրելիս օգտագործել յուրատեսակ հասկացություններ, յուրատեսակ է եղել նաեւ վերաբերմունքը Թուլիխուի բնակիչների հանդեպ:

Այնուամենայնիվ, եթե փորձենք այս իրադրությունը բացատրել այն հիմնական կառույցով, որն ընկած է



«քաղաք պետություն» հասկացության հիմքում, այն է՝ «քաղաքային» համայնքի ինքնավարության առկայությամբ, ապա կունենանք նման կառույցի գոյության օգտին վկայող երկու փաստարկ. առաջինը՝ Օհնալիբիի յուրատեսակ՝ «ժողովրդի արքա» տիտղոսն է, երկրորդը, այն հանգամանքն է, որ Վանի թագավորության դպիրները «քաղաքի երկիր» են անվանում նաեւ Բաբելոնը, որը կասսիտական տերության սահմաններում համապետական հարկերից ազատվել ու ինքնավարություն էր ստացել Կուրիգալզու Ավագի կողմից, Ք.Ա. 14-րդ դարի սկզբին. (ավելի վաղ նման կարգավիճակի էր արժանացել Սիպպարը, 1250 թվականին՝Նիպպուրը): Եթե առաջնորդվենք այս մոտեցմամբ, ապա կծագեն այլ հետաքրքիր հարցեր, մասնավորապես, շնորհվա՞ծ էր արդյոք ինքնավարության այդ իրավունքը, թե՞ նախնադարից եկող հասարակության զարգացման բնական մի փուլ էր այն, գոյատեւող՝ ձեւավորվող տերության սահմաններում»,- գրում է Սիմոն Հմայակյանն իր հեղինակած «Հայաստանի պատմական ժողովրդագրության հիմնահարցեր. Հայկական լեռնաշխարհը՝ հայ էթնոսի բնօրրան» աշխատության մեջ:

Թուլիխու ամրոցը, թագավորանիստ քաղաքը, անշուշտ, եղել են պատմական այն միջավայրը, որտեղ ձեւավորվել, բազմացել ու զարգացել է հայ ժողովուրդը հազարամյակների ընթացքում:

Ընդ որում, մինչքրիստոնեական հուշարձանները քիչ քանակ ու որակ չեն կազմում Վարդաձոր ու Չորագյուղ գյուղերում, քան քրիստոնեական մշակույթի հուշարձաններն են: Արժե հիշատակել Թուլիխուի, Չորագյուղի Սանգար ամրոցի, Երանոսի Նեղ Բողազի, Վարդաձորի Ներքին Դեմեր ամրոցից մինչ Սպիտակասարի փեշեր ձգվող հին բնակատեղիների ավերակները, վաղբրոնզեդարյան դամբարանադաշտերը, իսկ առաջին հերթին՝ սարրերով մեկ ցվրված քարակույտերի մեջ նկատված խորհրդավոր ժայռապատկերները, որոնք ստեղծվել են մարդկային պատմության վաղջական, անհիշելի ժամանակներում՝ պատկերելով մարդկային հավատալիքները, զբաղմունքը, նրա գեղագիտական շնորհներն անգամ հեռավոր հնադարում:

Թուլիխուն, այո, մի սրբավայր է, պաշտամունքային մի միջավայր, ուր մեր հեռավոր նախնիները ոչ միայն ապրել ու արարել են, մարտնչել ու պայքարել, այլ նաեւ պաշտել են մայր հողն ու կենարար ջուրը, առ երկինք աղոթք հղել սրբասուրբ այն լեզվով, որը, ժամանակների անասելի հեռավորություն ու փորձություններ հաղթահարելով, այսօր հնչում է մեր շուրթերից:

Թուլիխուն, ի վերջո, իր մեջ հնագիտական բազմաթիվ գաղտիքներ ու առեղծվածներ պահպանող հնավայր է, որը պահանջում է նոր ուսումնասիրություններ ու բացահայտումներ:

Խոսրով Խլղաթյան

22.qxd 14/11/2026 17:30 Page 6

ԱՐԵԳՈՒՆԻ ԳՅՈՒՂԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆԻՆ ՆԵՐԳՐԱՎՎԵԼ ԵՆ ՆԱԵՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԻ ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐ



Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Արեգունի գյուղի միջնակարգ դպրոցի ծրագրված հերթական միջոցառումը զուգադիպությամբ ներգրավվել են նաեւ արտասահմանցի զբոսաշրջիկներ, ովքեր այդ պահին ճամփորդել են Սեւանա լճի ափամերձ տարածքով:

Ինչպես տեղեկացրեց Արեգունու միջնակարգ դպրոցի տնօրեն Ամալյա Պատվականյանը, փառատոնը կրել է «Մեր համայնքի կենդանի գիրքը՝ երեկ, այսօր, վաղը» խորագիրը:

Բացօթյա փառատոնին մասնակցել են Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության, Վարդենիս խոշորացված համայնքի աշխատակազմի, ՀՀ ԿԳՄՍՆ Գեղարվեստական դաստիարակության եւ մշակույթի մանկապատանեկան կենտրոնի ներկայացուցիչները, Մեծ Մասրիկի կերպարվեստի ստուդիան, Վարդենիսի թիվ 1 եւ թիվ 2 երաժշտական դպրոցների սաները, Կարճաղբյուրի Ա. Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցը, ինչպես նաեւ «ՎալԱեթ Դանսե» պարային ստուդիայի սաները, Վարդենիս համայնքի կրթական հաստատությունների տնօրեններ, մանկավարժներ, ծնողներ, հյուրեր եւ համայնքի բազմաթիվ բնակիչներ:

Մասնակից յուրաքանչյուր կառույց իր ներկայությամբ ու մասնակցությամբ յուրովի է լրացրել միջոցառման գաղափարը՝ մեկ ընդհանուր հարթակում միավորելով կրթությունը, գիրքն ու ընթերցանությունը, երաժշտությունը, կերպարվեստը, պարը, համայնքի պատմությունն ու մշակութային ժառանգությունը:

-Հատկապես կարեւոր էր այն հանգամանքը, որ միջոցառմանը ներգրավված էր ամբողջ համայնքը: Տարբեր սերունդների ներկայացուցիչները դարձան ոչ միայն հանդիսատես, այլեւ մեր «կենդանի գրքի» մասնակիցներն ու պատմությունները փոխանցողները: ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից 2026-2027 ուսումնական տարին «Ընթերցանության տարի» հայտարարելը եւ ընթերցանության խրախուսումը որպես կրթական կարեւոր ուղղություն առանձնացնելը մեր դպրոցի համար դարձավ նոր նախաձեռնության մեկնակետ: Մենք սկսեցինք մտածել՝ ինչպե՞ս կարող ենք «Ընթերցանության տարվա» գաղափարը մեր դպրոցում կյանքի կոչել ոչ միայն հերթական գրական միջոցառման, այլեւ այնպիսի ձեւաչափով, որը կկարողանա համախմբել դպրոցը, ընտանիքը եւ ամբողջ համայնքը: Եվ հենց այդ մտորումներից ծնվեց «Մեր համայնքի կենդանի գիրքը՝ երեկ, այսօր, վաղը» բացօթյա կրթամշակութային փառատոնի գաղափարը: Մենք փորձեցինք ընթերցանության գաղափարին ավելի լայն իմաստ հաղորդել՝ ցույց տալով, որ կարդալ կարելի է ոչ միայն գիրքը: Կարելի է «կարդալ» նաեւ սեփական համայնքը: Կարդալ նրա երեկը՝ պատմությունների, հիշողությունների, ավանդույթների եւ ավագ սերնդի ապրած կյանքի միջոցով: Կարդալ նրա այսօրը՝ ներկայում ապրող, սովորող, աշխատող եւ ստեղծագործող մարդկանց միջոցով: Եվ փորձել գրել նրա վաղը՝ մեր երեխաների երազանքների, գաղափարների, գիտելիքի եւ կրթության միջոցով: Այսպես «Ընթերցանության տարվա» գաղափարը մեզ համար դարձավ ոչ միայն գիրք կարդալու խրախուսում, այլեւ առիթ՝ երեխային վերադարձնելու դեպի իր արմատները, սովորեցնելու լսել ավագ սերնդին, ճանաչել սեփական համայնքի պատմությունը եւ միաժամանակ մտածել նրա ապագայի մասին: Եվ մեզ համար հատկապես խորհրդանշական է «Վաղը», որովհետեւ այսօր Արեգունիում կառուցվում է նոր կրթահամալիր: Մեր երեխաների աչքի առաջ կառուցվում է նրանց նոր դպրոցը, իսկ մենք ցանկանում ենք, որ նրանք հասկանան՝ կառուցվում են ոչ միայն նոր պատեր ու դասասենյակներ, այլեւ ստեղծվում է իրենց կրթական վաղվա օրը:

Արեգունու ճանապարհով անցնող զբոսաշրջիկները, ովքեր ժամանել էին Գերմանիայից եւ Իտալիայից, նկատելով դպրոցում տիրող տոնական մթնոլորտը, հետաքրքրվեցին միջոցառմամբ եւ միացան մեզ: Նրանք շրջեցին տաղավարներով, ծանոթացան ,Մեր համայնքի կենդանի գիրքը՝ երեկ, այսօր, վաղը» գաղափարին, շփվեցին մասնակիցների հետ եւ մեծ հետաքրքրությամբ հետեւեցին միջոցառման ընթացքին: Ջրույցի ընթացքում մեր արտասահմանցի հյուրերը պատմեցին, որ ճանապարհորդում են Հայաստանով եւ իրենց ճանապարհորդության ու Հայաստանի մասին գիրք են պատրաստում: Նրանք հատկապես հետաքրքրվել էին Արեգունու գյուղում իրականացվող այս նախաձեռնությամբ եւ խոստացան, որ իրենց գրքում՝ իտալերենով, կպատմեն Հայաստանի, ինչպես նաեւ Արեգունիում հանդիպած այս հետաքրքիր կրթամշակութային գաղափարի եւ միջոցառման մասին,- ներկայացրեց Ամալյա Պատվականյանը:

Խոսորվ Խլղաթյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ ԿԱՅԱՑԵԼ Է ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆԻՆ ԵՎ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ



Գեղարքունիքի մարզային գրադարանում անցկացվել է գրական հանդիպում՝ նվիրված Թարգմանչաց տոնին եւ Հայ մամուլի օրվան:

Հանդիպման հյուրերն էին բանաստեղծ, թարգմանիչ, գրականագետ Ներսես Աթաբեկյանը եւ գրականագետ, հրատարակիչ Վահագն Սարգսյանը: Հանդիպումը նախաձեռնել էին ՀՀ Գրողների միության Գեղարքունիքի մարզային բաժանմունքի ղեկավար Տիգրան Նիկողոսյանը եւ Գեղարքունիքի մարզային գրադարանի տնօրեն Մարիամ Համբարձումյանը:

Ներսես Աթաբեկյանի պոեզիայի ընթերցումները, երաժշտական կատարումն ու գրական զրույցը հանդիպումը վերածեցին ջերմ ու բովանդակալից երկխոսության՝ գրողի, ընթերցողի եւ գրականության սիրահարների միջեւ:

Գրադարանի տնօրեն Մարիամ Համբարձումյանը շնորհակալագրերով եւ հուշանվերներով խրախուսեց Գավառ համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար Ալվարդ Մանուկյանին, «Գեղամա աշխարհ» թերթի գլխավոր խմբագիր Խոսրով Խլղաթյանին, «Քյավառ» հեռուստաընկերության լրագրողներ Արփիկ Կակոյանին եւ Անահիտ Կարեյանին՝ մարզի կենսագործունեությունը լուսաբանելու, մշակութային նախաձեռնություններին աջակցելու եւ արդյունավետ համագործակցության համար: Հուշանվերներ հանձնվեցին նաեւ օրվա հյուրերին՝ ի նշան հարգանքի եւ երախտագիտության:

Գրադարանավարի օրվա առթիվ Գեղարքունիքի մարզային գրադարանում էին Հայկական գրադարանային ասոցիացիայի նախագահ Ռուզան Տոնոյանը եւ փոխնախագահ, գրադարանագետ, մատենագետ Ռաֆիկ Ղազարյանը: Հյուրերը գրադարանում իրականացրին շրջայց:

Գրադարանի ընթերցողները հյուրերին ողջունեցին Ռաֆիկ Ղազարյանի պոեզիայով, որից հետո «Հայկական գրադարանային ասոցիացիայի» կողմից շնորհակալագրերով պարգեւատրվեցին մարզային գրադարանի փոխտնօրեն Ռուզաննա Ավետիսյանը, մանկական բաժնի վարիչ Ալինա Ավետիսյանը, մեթոդական բաժնի վարիչ Մարինե Մեհրաբյանը եւ մեթոդիստ Մարիկա Գեչիպարոնյանը, իսկ Գեղարքունիքի մարզային գրադարանը պարգեւատրվեց պատվոգրով եւ «Զանգակ» հրատարակչության նվեր-քարտով:

-Այսօրվա հանդիպմանը մենք մեկտեղեցինք մեր ժողովրդի գրական ու մշակութային կյանքում հավերժական նշանակություն ձեռք բերած մի քանի տոն, որոնք միավորվում են գրավոր խոսքի, գրականության, թարգմանության, մշակույթի եւ ազգային արժեքների պահպանման ու տարածման գաղափարները: Շատ ենք կարեւորում կենդանի շփումները արվեստի ու գրականության, մամուլի նվիրյալների հետ, իսկ նրանց մեծարումն ու խրախուսումը համարում ենք մեր հոգու պարտքն ու պարտականությունը,- նշեց Գեղարքունիքի մարզային գրադարանի տնօրեն Մարիամ Համբարձումյանը:

Խոսրով Խլղաթյան

ՄԵՎԱՆՈՒՄ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՕՐԸ ՆՇՎԵԼ Է ԲԱԶՄԱԲՆՈՒՅԹ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՈՎ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքում Ոչ նյութական մշակութային ժառանգության հանրահռչակման օրը նշվել է բազմաբնույթ միջոցառումներով:

Արդեն երրորդ անգամ Հայաստանում հոկտեմբերի 17-ը նշվում է որպես Ոչ նյութական մշակութային ժառանգության հանրահռչակման միջազգային օր:

Հոկտեմբերի 16-ին Լճաշենի Րաֆֆի Հովհաննիսյանի անվան մշակույթի տան հարակից այգում անցկացվել է «Եկեք խաղանք ինչպես առաջ» խորագրով գեղեցիկ ու ավանդույթներով հագեցած միջոցառում:Լճաշենի արվեստի դպրոցի եւ Րաֆֆի Հովհաննիսյանի անվան մշակույթի տան սաներն իրենց երգ ու պարով ուրախություն եւ ջերմ տրամադրություն են պարգեւել ներկաներին՝ միջոցառումը վերածելով իսկական մշակութային տոնի:

Միջոցառման ընթացքում ներկայացված էին տարածաշրջանին բնորոշ ավանդական ուտեստներ, իսկ կազմակերպված ժողովրդական խաղերը ներկաներին հնարավորություն տվեցին վերապրելու անցյալի հաճելի ու անմոռանալի պահերը:

Միջոցառման առանցքում ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման, արժեւորման եւ սերունդներին փոխանցման կարեւոր գաղափարն էր: Այն եւս մեկ առիթ էր՝ վերագտնելու մեր արմատները, արժեւորելու ազգային ավանդույթներն ու դրանք կենդանի պահելու նոր սերնդի կյանքում:

Հոկտեմբերի 17-ին Սեւանի Ս. Զաքարյանի անվան մշակութային պալատում կազմակերպվել է «Ոչ նյութական մշակութային ժառանգություն» թեմայով սեմինար: «Մատնա Հետք» արվեստանոցի կողմից կազմակերպվել է «Ձեռագործ աշխատանքներ» վարպետաց դաս: Ծովագյուղ բնակավայրում գործող «Ծովեմ» երիտասարդական կենտրոնի հեղինակմամբ կազմակերպվել են «Լսիր եւ ճանաչիր» խորագրով ազգային խաղեր:

Ս. Զաքարյանի անվան մշակույթի պալատի դահլիճում տեղի է ունեցել «Սեւանե երիտասարդական ակումբ» ՀԿ-ի հեղինակած «Սեւանի հիշողությունը Չկնորսության մշակույթ» փաստագրական ֆիլմի ցուցադրություն:

Հոկտեմբերի 19-ին Ս. Զաքարյանի անվան մշակույթի պալատի հարակից հրապարակում կազմակերպվել է վարպետաց դաս՝ «Ազգային պարերի ուսուցում» խորագրով: Սեւան համայնքի Հովի. Այվազովսկու անվան արվեստի դպրոցի կողմից կազմակերպվել է «Սասունցի Դավթից մինչեւ մեր օրերը» խորագրով ցուցահանդես եւ ներկայացում:

Արմինե Ղուկասյան



ՎԱՐԴԵՆԻԿ ԳՅՈՒՂՈՒՄ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է 7 ՓՈՂՈՑ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վարդենիկ գյուղում ՀՀ կառավարության կողմից 2026 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում սկսվել եւ ընթանում են 7 փողոցների հիմնանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Վարդենիկի փողոցների հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 167 միլիոն 179 հազար դրամ, որի 45 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 55 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսվում է Վարդենիկի 7 փողոցների ասֆալտապատում՝ 2568 գծամետր երկարությամբ եւ 12840 քառակուսի մետր մակերեսով: Տեղադրվելու են ջրահեռացման առուներ, բակային հատվածներում նախատեսվում է սալիկապատ մայթերի կառուցում160 քառակոսի մետր մակերսով:

Շինարարական աշխատանքները սկսվել են հոկտեմբերի երկրորդ կեսից, այս պահին ընթանում են հողային աշխատանքներ:

Շինարարությունն իրականացնում է ՎՄՎ ՔԱՄՓՆԻԵ ՍՊԸ-ն:

2026 թվականի նոյեմբերի 10-ի դրությամբ շինարարությունն իրականացվել է շուրջ 40 տոկոսով:

22.qxd 14/11/2026 17:30 Page 7

ԱՐՎԵՍՏԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽԱՉՄԵՐՈՒԿՆԵՐՈՒՄ

Հերթական միջոցառումը Դմմաշենի բնակավայրի գրադարանում կրկին իր շուրջը էր հավաքել գիրքն ու գիրը կարեւորող բազմաթիվ ընթերցողների: Միջոցառումը համընկել էր գրադարանավարի օրվան: Մի բան, որ շատ կարեւոր է՝ մասնագիտությունը գնահատված զգալու համար:

Մշակութային կյանքի ամեն մի երեւույթ ունի իր խորհուրդն ու նշանակությունը, որոնք իրենց ներդաշնակությամբ ու տիեզերական խորությամբ պատկերավոր տեղ են զբաղեցնում մարդու ներաշխարհում: Հազիվ թե հարկ կա ապացուցելու, որ հայոց գրի ու գրչի մեծերը մնայուն ու ասպետական կերպարներով մեզ են ժառանգել իրենց սրտից բխած գոհարները, սկսած վաղնջական ժամանակներից մինչեւ մեր օրերը, դասդասելով ճշմարիտ խոսքի արվեստը, մեր «Առավոտ լուսոները», մեր տաղիկներն ու շարականները, մեր անտունիները ու հորովելները, մեր դյուցազներգությունն ու ժողովրդական էպոսը:

Գրական Հնի ու Նորի որ խաչմերուկում որ կանգ առնենք, այն մեզ ուժ կտա... Այն մեզ կտա էպիկական, քնարերգական, վիպական, առասպելական երգերգություն, գրականից դեպի հնգակամար մշակութային պաթոս՝ երգ, պար, բանահյուսություն ու բանաստեղծական քնարերգություն, խոսքի մշակույթ, ինչը որ բխում է մարդու ներաշխարհից: Դժվար է բառերով արտահայտել արվեստի ու գրականության անժխտելի կապի ուժը, որով միաձուլվել են հայ գրականության Մեծերն ու ձեռք-ձեռքի տված պատմում են մեր ազգի անցած ճանապարհի ոտնահետքերը, մեր ազգի օրհնաբանումը, Ի խորոց սրտի՝ ձայն հառաչանացը... Պատմում ու երգաբանում են Մաշտոց ու Նարեկացի, պատմերգում Սայաթ-Նովա ու Կոմիտաս, պատմաբանում Խորենացի, Աբովյան, Թումանյան, Իսահակյան, Լեւոն Շանթ ու Վարուժան, Չարենց ու Տերյան, Պարույր Սեւակ ու Հովհաննես Շիրազ, Համո Սահյան ու Հրանտ Մաթեւոսյան, Մեծ դասականներից մինչեւ երիտասարդ ստեղծագործողներ՝ Հովհաննես Գրիգորյան ու Տիգրան Նիկողոսյան, Անատոլի Հովհաննիսյան, Հրաչ Բեգլարյան, Աննա Պետրոսյան ու Անդրանիկ Ավետիսյան եւ էլի շատ այլ նվիրյալ ստեղծագործողներ... Ճանապարհին խոնարհումով խոնարհվել այն կանգառներում ու խաչմերուկներում, ովքեր կերտել են հոգեւոր Հայաստան ու Հայագիտական հանրագիտարան: Ով եւ ովքեր մեր պանթեոնում լուսավորել ու լուսավորում են իրենց ազգի Տոհմածառով: Եկեք ծնկաչոքենք մեր յուրաքանչյուր պատարագը, հնչեցնելով նրանց հոգելույս խորհրդին ասելով՝ Խաչը մեր Կենաց Ծառն է՝ Հավերժ Պտղաբերությամբ...



Եկեք կյանքի մեր օրը հիշատակենք մշակութային գունագեղությամբ: Համբուրենք այն Ծնողաց ձեռքը, հայրենիքն ու հայրենի հողը, այն խրճիթն ու Տուն-Օջախը, որտեղ որ ծնվել են մեր ազգի Մեծերը, այդ թվում նաեւ հայրենի հողի հոգելույս Հերոսները, բոլոր ժամանակների անմահացած Հայորդիները...

Այդ խորհրդով գրադարանում գրական ցերեկույթը կրում էր երեք վերնագրեր՝ «Հայոց էքոնոգույները», «Արվեստի եւ գրականության խաչմերուկներում», «Սասնա Ծռեր» էպոսի ոսկե դարը»:

Միջոցառման սկիզբը ազդարարում էր Հայկական էպոսից մի հատված, ինչը Արծվալեզու ու արծվագոչ խոսք ու երաժշտությամբ կարծես բացեց Ագռավաքարի դուռը, որ պատմի Ոսկեդարի խորհուրդը՝ օրվա ասելիքով լեփլեցուն:

Հայ գրականության գանձարանի Ոսկե ֆոնդի ընտրագույներով մեկը մյուսից հաջորդում ու ձայնձայնում էին միջոցառման մասնակից ասմունքողները՝ գրադարանի ընթերցողներ, դպրոցի շնորհալի աշակերտներ Հրաչ Կիրակոսյանը, Արման Մարտիրոսյանը, Ղուկաս Ղուկասյանը, Սամվել Գրիգորյանը, Արինա Ստեփանյանը, Աննա Անտոնյանը, Աննա Հայրապետյանը, Մանե Խաչատրյանը:

Գրքատանը ցուցադրվում էր 2026 թվականի հոբելյանական տարելիցների շարքը:

Պոեզիայի զբոսանքը գրադարակներից դուրս էր եկել ու տարածվել օդում, ունկնդրի լսողության մեջ, դառնալով ազգային էքոնոգույներ իր գունագեղությամբ:

Արվեստը, գրականությունը գրատանը հանդիպելով նույն խաչմերուկում, ստեղծել էին գրական ճաշակ ու բարձր տրամադրություն: Մթնոլորտը շիկացած էր հայոց գրքերի ու գրերի հոգեւոր օջախում, որտեղ թեւածում էր Տաճարի մաքրությունը: Օրը լեցուն էր պոեզիայի շնչով ու ծաղիկների բույրով: Ներկաները վայելում էին ասմունքի, շնորհավորանքի գեղեցիկ խոսքեր:

Ներկաները շնորհակալական խոսքեր ուղղեցին միջոցառման մասնակիցներին ու կազմակերպիչներին՝ թողնելով այդ հոգեւոր կանաչ կղզյակը, կրին հանդիպելու ակնկալիքով:

Ֆլորա Գրիգորյան
Դմմաշենի գրադարանի տնօրեն

ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ «ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՀԱՄԱՐ 2050 ԹՎԱԿԱՆԻՆ» ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆԸ



Տեղի է ունեցել «Դպրոցականների տեսլականը Սեւանա լճի համար 2050 թվականին. Երեխաների ձայնը քաղցրահամ ջրերի կենսաբազմազանության համար» ծրագրի փակման արարողությունը, որի ընթացքում մրցանակներ են հանձնվել ծրագրին ներկայացված ու ժյուրիի կողմից հաղթող ճանաչված գեղանկարչական աշխատանքների հեղինակներին:

Ինչպես տեղեկացրեց «ԲԼԵՋԱՆ» բնապահպանական, սոցիալական ու բիզնեսի աջակցության ՀԿ նախագահ Լիաննա Ասոյանը, ավելի քան 140 աշխատանքներից ընտրված 50 նկարները ներկայացվել են ծրագրի փակման արարողության ընթացքում՝ COP17-ի Կանաչ գոտում՝ հնարավորություն տալով երիտասարդներին՝ իրենց գաղափարներն ու տեսլականներն արվեստի միջոցով ներկայացնելու ավելի լայն լսարանի:

Ժյուրիի գնահատման արդյունքների հիման վրա 50 նկարներից ամենաբարձր միավորները հավաքած երեք մասնակիցներն արժանացել են գլխավոր մրցանակներին, իսկ մյուս բոլոր մասնակիցները ստացել են խրախուսական նվերներ:

Գլխավոր մրցանակները հանձնել են Հայաստանում Եվրոպական Միության դեսպան Վասիլիս Մարագոսը, Հայաստանում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի մշտական ներկայացուցիչ Նաթիա Նացվլիշվիլին եւ «ՆՈՐՀՈՎԱՆԻ» ՍՊԸ-ի հիմնադիր Լիաննա Ասոյանը:

-Այս նախաձեռնությունը եւս մեկ անգամ ցույց տվեց, թե որքան գեղեցիկ ու կարեւոր գաղափարներ կարող են ծնվել, երբ երեխաներին հնարավորություն է տրվում՝ արտահայտվելու իրենց ապագային առնչվող կարեւոր հարցերի շուրջ,-նշեց Լիաննա Ասոյանը:

Ծրագիրն իրականացվել է Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ:

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՏԵՂԻ ԵՆ ՈՒՆԵՑԵԼ ՈՉ ՅՈՒԹԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ



Մարտունի համայնքի Մադինա եւ Ջորագյուղ բնակավայրերում տեղի են ունեցել Ոչ նյութական ժառանգությանը նվիրված միջոցառումներ:

Մադինայի մշակույթի տան բակում տեղի ունեցած միջոցառմանը մասնակցել են Մադինայի միջնակարգ դպրոցի աշակերտները: Նրանց կողմից երկայացվել են հայկական ավանդական ուտեստների ցուցադրություն եւ հետաքրքիր տեղեկություններ աշխարհիկ ու հագեւոր տոների ու ծեսերի մասին:

Մասնակիցները մեծ ոգեւորությամբ դիտել են հայկական հերոսական էպոսի մոտիվներով գեղեցիկ բեմադրությունները, իսկ միջոցառմանը յուրահատուկ շունչ են հաղորդել ազգային պարերի ուսուցման դասընթացն ու կատարումները:

Ջորագյուղում Ոչ նյութական մշակութային ժառանգությանը նվիրված միջոցառմանը ներկայացվել է լավաշի պատրաստումը թոնրում, չորաթանի պատրաստումը, բուրդ գզելու գործընթացը: Միջոցառումը եզրափակվել է գյուղական բերք ու բարիքի հյուրասիրությամբ:

-Մշակութային ժառանգությունը կենդանի է այնքան ժամանակ, քանի դեռ այն պահպանվում, կիրառվում եւ փոխանցվում է սերնդեսերունդ:

Ամեն գնով ու ամենայն սիրով պետք է պահպանենք մեր արմատները, արժեւորենք մեր ավանդույթներն ու փոխանցենք դրանք գալիք սերունդներին,- ներկայացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից:

ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԳՅՈՒՂՈՒՄ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎԵԼ Է 6 ՓՈՂՈՑ


Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն գյուղի 6 տարբեր փողոցների հիմնանորոգման աշխատանքները մեկնարկել են 2026 թվականի հոկտեմբերի սկզբից, ՀՀ կառավարության կողմից իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Ներքին Գետաշենի փողոցների հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 229 միլիոն դրամ, որի 45 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 55 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսվում է Ներքին Գետաշենի 6 տարբեր փողոցների ասֆալտապատում՝ 2100 գծամետր ընդհանուր երկարությամբ եւ 10500 քառակուսի մետր մակերեսով, որոշ փողոցներում՝ ջրահեռացման առուների կառուցմամբ:

2026 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ շինարարական աշխատանքներն արդեն գտնվում են ավարտական փուլում:

Ծրագրի իրականացման արդյունքում Ներքին Գետաշենի Վերին Դուրան, Ներքին Դեմեր, Սուրբ Խաչ, Սուրբ Վարդան թաղամասերի 6 փողոցների բնակիչները պատմության մեջ առաջին անգամ ասֆալտապատ ճանապարհներից օգտվելու հնարավորություն կունենան:



Շինարարական աշխատանքներն իրականացրել է «Շանթ Սեյրան» ՍՊԸ-ն:

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-Ի ՀԱՄԵՄԱՏ ԲԱՐՁՐ Է ՄՆՈՒՄ 23 ՍԱՆՏԻՄԵՏՐՈՎ

2026 թվականի նոյեմբերի 11-ի դրությամբ Սեւանա լճի մակարդակը նախորդ տարվա նույն օրվա համեմատ բարձր է մնում 23 սանտիմետրով:

ՀՀ ՇՄՆ «Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիտորինգի կենտրոնե ՊՈԱԿ տեղեկագրի տվյալներով, 2026 թվականի նոյեմբերի 3-ի դրությամբ Սեւանա լիճը ծովի մակերեւույթից գտնվել է 1900 մետր 53 սանտիմետր բարձրության վրա՝ նախորդ տարվա նույն օրը գրանցված 1900 մետր 30 սանտիմետր նիշի դիմաց:

2026 թվականի հունվարից մինչ նոյեմբերի 11-ն ընկած ժամանակահատվածում Արփա-Սեւան թունելային ջրատարով Սեւանա լիճ է տեղափոխվել 178 միլիոն 412 հազար խորանարդ մետր ջուր՝ 2025 թվականի նույն ժամանակահատվածում տեղափոխված 108 միլիոն 966 հազար խորանարդ մետր ջրի դիմաց:

2026 թվականի հունիս-սեպտեմբեր ամիսներին ոռոգման նպատակով Սեւանա լճից Հրազդանի հունով բաց է թողնվել 75 միլիոն 306 հազար խորանարդ մետր ջուր՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում բաց թողնված 180 միլիոն 965 հազար խորանարդ մետր ջրի դիմաց:

22.qxd 14/11/2026 17:30 Page 8

ԱՐԴԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԵԼԻ ՔՆԱՐԵՐԳՈՒՆԵՐԻՑ ՄԵԿԸ. ՍԱՇ ՀԱՅԿԱԶՈՒՆԻ

Գեղարքունիքի մարզային գրադարանում կազմակերպվեց հադիպում արդի հայ գրականության երեւելի դեմքերից մեկի՝ ՍԱՇ Հայկազունու հետ: Հանդիպումը նախաձեռնել էր ՀՀ Գրողների միության Գեղարքունիքի մարզային բաժանմունքի ղեկավար Տիգրան Նիկողոսյանը:

Սաշ Հայկազունին տարիներ շարունակ հոգեբուխ նվիրումով հարստացնում է հայ քնարերգության փառավոր ու շքեղաշուք էջերը՝ հրաշալիորեն ու անսխալ զգալով հայ բանաստեղծության տրոփող երակը:

Հազարամյակների ճանապարհ անցած հայկական քնարերգությանը ՍԱՇ Հայկազունին հաղորդում է բոլորովին նոր որակ, նոր ասելիք, նոր խոհականություն:

«Գեղամա աշխարհ» թերթի 2021 թվականի 4-րդ համարում լույս է ընծայվել նրա ստեղծագործություններից մեկը: Իսկ մեր թերթի էլեկտրոնային տարբերակում նա ընթերցողին ներկայանում է առաջին անգամ:

Թեեւ 27 տարի շարունակ նա ապրում է հայրենիքից դուրս, ՌԴ Վոլգոգրադ քաղաքում, ադուհանդերձ, նա շարունակում է ապրել հայրենիքի հոգսերով, ցավերով, առօրյայով, գեղեցկությամբ ու անհուն կարոտով, ու բոլոր այդ հույզերը նա ողջ անկեղծությամբ, նրբին քնարերգությամբ մատուցում է ընթերցողների ստվար բազմությանը:

ՍԱՇ Հայկազունին ծնվել է 1969 թվականին, Երեւանում: Նախադպրոցական տարիներն անցել են Լոռվա գեղատեսիլ բնության գրկում, տատի պատմած հեքիաթների գունազարդ ու կախարդական աշխարհում... Ավարտելով Երեւանի թիվ 155 միջնակարգ դպրոցը, ընդունվել եւ ավարտել է Երեւանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի կենսաբանա-քիմիական ֆակուլտետը, ապա երկար տարիներ դասավանդել դպրոցում: Այնուհետ ընդունվել եւ ավարտել է նաեւ Երեւանի Հայբուսակ բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետը: 1999 թվականից տեղափոխվել ու բնակվում է Ռուսաստանի Դաշնության Վոլգոգրադ քաղաքում:

2015 թվականին լույս է տեսել «Մենակությունս», 2018 թվականին՝ «Հեքիաթ հավերժի», 2021 թվականին՝ «Խելակորույս աշխարհ» 2025 թվականին՝ «Հրաբուխի շուրթին» բանաստեղծությունների ժողովածուները:

2021թվականի հունիսից Հայաստանի գրողների միության անդամ է:

Ունի երկու զավակ եւ մեկ թոռ:

Խոսրով Խլղաթյան



ԽԱՂԻԿ

Ասացիր.
-Ո՞վ ես դու, որտեղի՞ց...
Ասացի.
-Սիրիուսից հեռավոր:
Նայեցիր զմայլված,
Ժպտացիր՝
Ժպիտով անմեղ ու
Մեղավոր:
Ասացիր.
-Եկ, նստիր իմ կողքին,
Տխուր եմ, դառնացած
Ու մենակ...
Ասացի.
-Թե հպվեմ, քո հոգին
Կվառվի բոցերում
Շարունակ:
Ասացիր.
-Թող վառվի հավիտյան,
Գրկիդ մեջ բոցակեզ
Թող հալչեմ...
Ասացի.
-Շաղի հետ վաղորդյան
Կթողնեմ քեզ մենակ,
Կկորչեմ:
Ասացիր.
-Կսպասեմ կրկին քեզ,
Թե իմն ես, ետ կգաս
Դու մի օր...
Ասացի.
-Թե չգամ, չտխրես, Սիրիուսից կժպտամ
Աստղածոր...

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ

Ես մքնշաղդ սիրեցի,
Ես արշալույսդ վառ,
Ես տրտմությունդ երգեցի,
Ես ժպիտդ պայծառ:
Իմ հոգու մեջ ես կրում եմ,
Ինչպես լուսե պսակ,
Ես պատմությունդ փառահեղ,
Ես ալեցունց ներկադ:
Ի՛մն է հայկյան ոգին խրոխտ,
Անպարտ, արեւածին,
Ի՛մն է երկինք վեր խոյացող
Հայոց եկեղեցին:
Ի՛մն են քարերը սեպագիր,
Հանց անցյալի վկա,
Մագաղաթները ձեռագիր,
Որ եղել են ու կան...
Ու որքան շատ փորձեն խեղել
Փառքդ, աշխարհ հայոց,
Այնքան ուժգին պիտի սիրեմ,
Իմ ոգեղեն ամրոց:
Ինձ ասացին՝ բա՛վ է,
Երգդ երգված է,
Հերիք գրես տողեր
Մտամոլոր,
Համբուրածդ ձեռքը
Անաղուհաց է,
Շուրթը՝ երդմնազանց,
Ստին սովոր:
Ես ասացի՝ գիտե՞ք,
Վերում Աստված է,
Ու թող դատի այնպես,
Ինչպես կուզի.
Ես իմ ծուռ հերոսին
Սիրահարված եմ
Ու կգրեմ, թեկուզ
Մեկ լար հուզի...
Ինձ ասացին՝ դա՛վ է
Հովիտներում կանաչ,
Էլ չեն բուրում այնտեղ
Շուշանները վայրի,
Այնտեղ տատասկներ են
Համատարած,
Որ մատնել են նեռին
Ոգին դարի:
Ես ասացի՝ գիտե՞ք,
Վերում Աստված է,
Ու թող դատի կրկին,
Ինչպես կուզի.
Ես էս ծուռ աշխարհին
Սիրահարված եմ,
Ու թե հարկ է, կայրվեմ
Արարումով լույսի:
Ինձ ասացին՝ ցավ է
Հայոց աչքերի մեջ,
Ուր ժպիտը անգամ
Խոնավ է, թաց,
Բիբլիական սարը
Գերեվարված է,
Հողը պապենական՝
Սրբապղծված:
Ես ասացի՝ գիտե՞ք,
Վերում Աստված է,
Թե հավատաք,
Մի նոր դուռ կբացի.
Ես էս խելառ դարին
Սիրահարված եմ
Ու կերգեմ նրա գովքը
Այգաբացի:

ԵՐԵԿ, ԱՅՍՕՐ ՎԱՂԸ

Երեկ հեքիաթի աղջիկն էր քո հետ,
Էն, որ համբուրեց շրթունքդ անուշ,
Այսօր պոետն է ու գողտրիկ մի երգ,
Վաղը ամեն բան կդառնա լոկ հուշ:

Երեկ աստղերը սեր էին մաղում.
Հոգու թռիչք էր, թովչանք էր անմեղ...
Այսօր ամպրոպ է երկնակամարում,
Վաղը գուցեեւ լինի ջրհեղեղ...
Երեկվա օրը մի՛ փնտրիր բնավ,
Այն երգ է դարձել, դարձել՝ պատմություն,
Այսօրը վրձնիր նկարչի նման,
Վաղը, սիրելի՛ս, վաղը թո՛ղ Աստծուն:

ՆԵՐԿԱՊՆԱԿ

Գիշերը իր սեւ շղարշն էր փռել,
Բացել էր գունեղ ներկապնակը,
Մի բու զարմանքից աչքերը չռել,
Խառնել էր կարծես սեւն ու ճերմակը:
Հուշերը եկել ու աչքիս առաջ
Պտտվում էին, ասես թե ծես էր,
Բայց ո՞ւր էր խաչը, ո՞ւր էր քահանան,
Ծնո՞ւնդ էր, մա՞հ էր, թե՞ հարսնատես էր...
Մի փոքրիկ աղջիկ ծաղկաթերթերից
Պսակ էր հյուսում տիկնիկի համար,
Որ տատի փեշի կարկատաններից
Կարած տիկնիկի սիրտը ջերմանար:
Օ՜, խավարածին քաոսի տերեր,
Դուք էլ եք կարված տիկնիկի նման,
Աղջիկն այն ցավից պոետ է դարձել,
Որ արդեն երգեր հյուսի ձեզ համար:
Բայց ձեր սիրտը՝ քար, խո՛լ ապառաժ է,
Վկա է վերից նայող լուսնկան.
Այդ ձեր անվրդով հայացքի առջեւ
Ճերմակ աղավնին անկենդան ընկավ:
Գիշերը իր սեւ շղարշն էր փռել,
Նոսրանում էին գույները կամաց,
Մի բու հայացքով փորձում էր ասել՝
Լույսը բացվում է, դիմացի՛ր, պի՛նդ կաց...

ԲԱԶՄԱԿԵՏԵՐ

Տողերիս մեջ հաճախ
Մորեմերկ եմ եղել
Ու չեմ կրել դիմակ,
Չեմ խաղացել դերեր,
Մերթ՝ հարցական,
Մերթ էլ,
Գուցե, շեշտ եմ եղել,
Մերթ էլ՝ դրել անվերջ
Բազմակետեր...
Տողերիս մեջ հաճախ
Դուռս բաց եմ թողել,
Ափս բաց եմ պահել
Գիշեր ու զօր,
Մնացողի համար
Հոգու հաց եմ եղել,
Գնացողին՝ ժպիտ
Աստվածամոր...
Տողերիս մեջ հաճախ
Թե սխալ են պեղել
Ու փնտրել են չեղած
Տողատակեր,
Ես փորձել եմ ժպտալ
Ու փորձել եմ ներել
Ու դրել եմ կրկին
Բազմակետեր...

ԾԱՓԵՐՍ ՔԵԶ

Կյա՛նք իմ, մեղմ ասած,
Տարօրինակ ես,
Մերթ շռայլ, մերթ զուսպ,
Մերթ խեղկատակ ես:
Մերթ որոտում ես,
Պայթում ես անսանձ,
Մերթ ինձ տանում ես
Ճամփեքով անդարձ:
Կյանք, դու՝ դեռ հնուց
Թափառող կրկես,
Ես՝ դարին գամված
Լոկ հանդիսատես...
Լու՛ռ, աներեւույթ
Անցիր կողքովս,
Ինքս իմ գլխին
Կմաղեմ հողս:
Ինքս կիջեցնեմ
Վարագույրը թավ՝
Թողած անուրջներ,
Համբույր, սեր ու դավ:
Կյանք, որքան քաղցր,
Այնքան էլ դառն ես,
Լացս պահեմ ինձ,
Ծափերս տամ քեզ:

ԱՆՄՈՌՈՒԿՆԵՐ

Ես հեռացա քեզնից
Աշնան մի պաղ գիշեր՝
Կապույտ անմոռուկներ
Թողած բարձիդ,
Թերթիկներում նրանց՝
Անմարելի հուշեր
Ու մի թաքուն շավիղ
Վերադարձի ...
Ես հեռացա, հոգի՛ս,
Որ դու քեզ որոնես
Արշալույսի վճիտ
Ճաճանչներում.
Ու թե գտնես,
Գուցե տաք ժպիտս տեսնես
Վայրի ծաղիկների
Կապույտ թերթիկներում...
Իսկ թե հանկարծ, հոգի՛ս,
Բացվող օրը չքնաղ
Այլ երանգներ բերի
Քո աշխարհին,
Թափ տուր բարձդ զգույշ,
Թափ տուր այնպես արագ,
Որ տաք ժպիտը իմ
Ձուր մատներդ չայրի...

ԿԱՆՉ

Սարերս թողել եմ հեռվում,
Կառչել եմ քաղաքի վիհերից,
Իմ հոգում անծրեւ է մաղում,
Շրթունքս ճաքել է ցամաքից:
Ինչ-որ տեղ ծաղկել է լորենին,
Ինչ-որ տեղ բուրում է ուրցը,
Ես, փակվել իմ սառը զնդանում,
Տանում եմ հոգսերիս խուրձը:
Մի հրաշք լիներ, ու կրկին
Բոկոտն վազեի հանդերում,
Վրնջար հեռվից պապիս ձին,
Որոտար ծովիանը երկնքում...
Ու սելավ տեղար իմ գլխին,
Ու տատս, ինչպես մի աստված,
Գիրկն առներ շփոթված իր ծագին,
Տուն տաներ՝ շալի մեջ պարուրած:
Ու լցվեր հեքիաթով իմ տատի
Խրճիթն այն՝ հասարակ ու տաք,
Ու պատից կախ ընկած լամպը հին
Թվար մի հսկա արեգակ...
Սարերս թողել եմ հեռվում,
Հուշերս տանում եմ ինձ հետ,
Իսկ դրսում անծրեւ է մաղում
Ու կորչում մայթերին անհետ...

ԴԱՐԻՍ ՁԱՎԵՇՏԸ

Իսկ արշալույսներն այստեղ խաղաղ չեն,
Մի տեսակ ուրիշ տագնապ կա օդում,
Այստեղ բառեր են, գոչեր են հնչեղ,
Ավա՜ղ, ոչնչի էլ չեմ հավատում:
Այստեղ խաչվել են, խառնվել աներեւույթ
Սեր, կյանք, մահ, ցնորք եւ, անգամ, հավատք,
Օ՜, շլացուցիչ մեծարգո շահույթ,
Աշխարհն իր հունից հանեցիր, տարար:
Իսկ արշալույսներն այստեղ խաղաղ չեն,
Ծղրիդներ չկան պատուհանիս տակ,
Մի հի՛ն աղոթք է երկնքից կառչել,
Լքված մի մատուռ, մի կոտրած տաշտակ...
Իսկ գիտե՞ք որն է զավեշտը դարի,
Եվ ո՞ւր են տանում հնչեղ գոչերը.
Անմիտ ծերերն են հեծնել աշխարհին,
Ընկնում են մարտում լոկ կտրիճները:
Իսկ արշալույսներն այստեղ խաղաղ չեն,
Մի տեսակ մարդու հավատ չի գալիս.
Աստվա՛ծ իմ, եթե դու էլ ես ննջել,
Բե՛ր, գլուխդ դիր հոգնած ծնկներիս:

ԿՈՐԵԼ Է

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Ծովակ գյուղի բնակիչ, Վարդենիսի Վ. Համբարձումյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետի 2016 թվականի շրջանավարտ Վարուժան Սաշայի Մանուկյանի բարձրագույն կրթության AB 218615 համարի դիպլոմը:

Համարել անվավեր:

ԳԵՂԱՄԱ աշխարհ

Լրատվական գործունեություն իրականացնող «Գեղարքունիք» թերթի խմբագրություն» ՓԲԸ: Հասցեն՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
էլ.հասցե՝ khosrov1@yandex. ru
Կայք էջ՝ https://geghama.am/
Գլխավոր խմբագիր՝ Խոսրով Խլղաթյան
հեռ. բջջ. 094022692

Վկայական՝ 02 Ա 050560: Գրանցման համարը՝ 25.120.00834:
Տրված 07.05.2001թ.: Տպաքանակը՝ 1000: Ծավալը՝ 2 մամուլ:
Թողարկման օրը՝ 22. 11. 2026 թ.:
Տպագրվում է «Հայկարի» ՓԲԸ տպարանում:
«Գեղամա աշխարհ» թերթի բոլոր համարներին կարող եք ծանոթանալ https://tert.nla.am կայքում: